

# 2022
# ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀՌՀ

www.tvradio.am

*Հարգարժա՛ն Ազգային ժողով,*

*Հեռուսփատեսության եւ ռադիոյի հանձնաժողովն իր Տարեկան հաղորդման ներկայացումն Ազգային ժողով դիտարկում է ո՛չ միայն որպես Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 196-րդ հոդվածի պահանջի կատարում, այլ նաեւ կարգավորող մարմնի գործունեության հանրային հաշվետվություն, ինչը պարտավորեցնում է՝ ամենայն պատասխանատվությամբ մոտենալու Հաղորդման պատրաստմանն ու ներկայացմանը:*

*Հանձնաժողովի ստեղծումից ի վեր հանրության մտահոգության գլխավոր առարկան կարգավորող մարմնի իրական անկախությունն է, պետության եւ քաղաքացիների շահերից բխող անկողմնակալ որոշումների ընդունման կամքն ու ունակությունը, ինչպես նաեւ հաշվետվողականությունն ու թափանցիկությունը: Այդ է պատճառը, որ Հանձնաժողովի՝ վերջին տարիների գործունեության առաջնային նպատակներից էին՝ բարձրացնել հանրային վստահությունը կարգավորող մարմնի հանդեպ, առավելագույնս նվազեցնել քաղաքական ուժերի միջամտությունը մեր գործունեությանը, աջակցել Հանձնաժողովի կարգավորման ներքո գտնվող տեսալսողական ծառայություններ մատուցողների ազատ եւ անխափան գործունեությանը, հաշվետու լինել հանրության առջեւ:*

*Հանձնաժողովը վստահորեն արձանագրում է, որ 2022 թվականը վերը նշված նպատակներն իրագործելու առանցքային տարի էր, ինչի վկայությունը նաեւ բարձրագույն օրենսդիր մարմնին ներկայացվող Տարեկան հաղորդումն է:*

*Տեսալսողական մեդիայում ստեղծված իրավիճակը, սակայն շարունակում է մտահոգիչ մնալ: Թվային տեխնոլոգիաների «պայթյունային» զարգացումը, արագ ընթացող քաղաքական, տնտեսական փոփոխությունները, իրավական կարգավորումների անկատարությունը, քաղաքացիական ինստիտուտների թերի զարգացումը նոր մարտահրավերներ են առաջացնում մեդիայի ազատության ու անկախության համար, իսկ մյուս կողմից՝ պարարտ հող ստեղծում քարոզչական գործիքների միջոցով կեղծ տեղեկատվության, «թշնամանքի լեզվի» եւ մտաշահարկումների (մանիպուլյացիաների) տարածման համար:*

*Երկրի անվտանգությանը սպառնացող, լրագրության մասնագիտական չափորոշիչները, Հեռարձակողների անկախությունն ու ազատությունը, հանրային շահի սպասարկումն արժեզրկող մարտահրավերների չեզոքացումն այսուհետ պետք է առաջնային խնդիր համարվի ո՛չ միայն կարգավորող մարմնի, այլ նաեւ պետության տարբեր ինստիտուտների ու հասարակության համար:*

***Տիգրան Հակոբյան,***
*Հեռուստատեսության եւ ռադիոյի*
*հանձնաժողովի նախագահ*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

2. ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈւՆ 5

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ, ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 8

4. ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՈԼՈՐՏԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 10

5. ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 14

6. ՀԵՂԻՆԱԿԱՅՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ 15

7. ՀԱՆՐԱՅԻՆ ՄՈՒԼՏԻՊԼԵՔՍ ՑԱՆՑՈՒՄ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐ 16

**7.1 Լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցողներ**

7.1.1 Հանրապետական սփռում իրականացնող լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցողներ

7.1.2 Մայրաքաղաքային սփռում իրականացնող լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցողներ

7.1.3 Մարզային սփռում իրականացնող լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցողներ

**7.2 Լիցենզավորված լսողական մեդիածառայություն մատուցողներ**

7.2.1 Հանրապետական սփռում իրականացնող լիցենզավորված լսողական մեդիածառայություն մատուցողներ

7.2.2 Մայրաքաղաքային սփռում իրականացնող լիցենզավորված լսողական մեդիածառայություն մատուցողներ

7.2.3 Մարզային սփռում իրականացնող լիցենզավորված լսողական մեդիածառայություն մատուցողներ

**7.3. Առանց լիցենզիայի տեսալսողական ծրագրեր հեռարձակողներ**

7.3.1 Հանրային հեռարձակողներ

7.3.2 Օտարերկրյա տեսալսողական ծրագրեր հեռարձակողներ

8. ՄԱԼՈՒԽԱՅԻՆ ԿԱՄ ԱՅԼ ՑԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՂ ՑԱՆՑԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ 24

9. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ 26

**9.1 Մրցույթներ**

9.1.1 Տեսալսողական ծրագրերի հանրապետական սփռում

9.1.2 Տեսալսողական ծրագրերի մայրաքաղաքային սփռում

9.1.3 Լսողական ծրագրերի մարզային սփռում

**9.2. 2022 թվականի լիցենզավորման, լիցենզիայի գործողության դադարեցման ցուցանիշներ**

10. ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԴԻՍՏՐԻԲՅՈՒՏՈՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 31

10.1 Տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների ծանուցումների հաստատման գործընթաց

10.2 Ոչ գծային տեսալսողական տեղեկատվության հեռարձակման գործունեություն իրականացնելու թույլտվությունների տրամադրման գործընթաց

11. ՀԵՌԱՐՁԱԿՈՂՆԵՐԻ ԵՎ ՑԱՆՑԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ 32

12. ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԹԵՄԱՏԻԿ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԵԹԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 33

13. ԷԹԻԿԱՅԻ ՆՈՐՄԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ 37

14. ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ 40

14.1 Հարուցված վարույթներ

14.2 Վարչական վարույթների հարուցման համար հիմք հանդիսացած իրավախախտումներ

14.3 Դատական բողոքարկումներ

15. ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԳԾՈՎ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԿԱՏԱՐՎԱԾ ՓԱՍՏԱՑԻ ՄՈՒՏՔԵՐ 45

16. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ 46

17. ԸՆԴՈՒՆՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ 50

18. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ 51

19. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԵՐԱԶԻՆՈՒՄ 51

20. ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 53

21. 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ 54

# 1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) անկախ պետական մարմին է, որն ապահովում է հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը եւ բազմազանությունը, վերահսկում տեսալսողական մեդիածառայություն մատուցողների (Հեռարձակողների), ցանցային օպերատորների եւ տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների գործունեությունը:

Հանձնաժողովն իր լիազորություններն իրականացնելիս առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Տեսալսողական մեդիայի մասին», «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին», «Լիցենզավորման մասին» օրենքներով, տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող այլ իրավական ակտերով եւ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Հանձնաժողովն՝ որպես կարգավորող մարմին, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 196-րդ եւ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 39-րդ հոդվածների համաձայն Ազգային ժողով է ներկայացնում 2022 թվականի իր գործունեության եւ տեսալսողական մեդիայի ոլորտում տեղեկատվության ազատության վիճակի մասին տարեկան հաղորդում:

Տարեկան հաղորդման մեջ հակիրճ ներկայացված են՝

- Հեռարձակողների ազատության եւ անկախության վիճակի,
- Հանձնաժողովի գործունեության անկախության, թափանցիկության եւ հաշվետվողականության,
- Հանձնաժողովի լիազորություններին համապատասխան իրականացված բոլոր գործառույթների վերաբերյալ ամբողջական տեղեկություններ եւ վիճակագրական տվյալներ:

Տարեկան հաղորդման մեջ Հանձնաժողովը ներկայացրել է նաեւ այն խնդիրները, որոնք խոչընդոտում են Հանձնաժողովի, ինչպես նաեւ Հեռարձակողների բնականոն եւ արդյունավետ աշխատանքին: Ներկայացված բոլոր փաստացի տվյալները հիմնված են Հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքների, մշտադիտարկումների, ուսումնասիրությունների, վերլուծությունների, հարցումների պատասխանների վրա:

## ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվության ազատության իրավական հիմքը ՀՀ Սահմանադրությունն է, որը երաշխավորում է զանգվածային լրատվամիջոցների, այդ թվում՝ տեսալսողական մեդիայի ազատությունն ու անկախությունը, ինչպես նաեւ պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններից տեղեկություններ ստանալու ազատությունը:*

Հանձնաժողովն արձանագրում է, որ Մամուլի ազատության համաշխարհային ցուցիչի համաձայն **(https://rsf.org/en/index)**՝ Հայաստանի Հանրապետությունը 2022 թվականին՝ 2021 թվականի համեմատ 12 (իսկ 2018 թվականի համեմատ՝ 29) կետով բարելավել է իր դիրքերը՝ 180 պետությունների շարքում զբաղեցնելով 51-րդ հորիզոնականը: Այս ցուցանիշը վկայում է, որ իշխանությունները հիմնականում հավատարիմ են մնացել իրենց հռչակած սկզբունքներին եւ ստանձնած պարտավորություններին, այն է՝ երաշխավորել խոսքի եւ մամուլի ազատությունը, բազմակարծությունը:

Հանձնաժողովը, որպես հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը եւ բազմազանությունն ապահովող անկախ պետական մարմին՝ արձանագրում է, որ 2022 թվականին Հանձնաժողովի կարգավորման ներքո գործող տեսալսողական ծառայություններ մատուցողները գործել են ազատ, վարել ինքնուրույն խմբագրական քաղաքականություն: Այդ մասին են վկայում միջազգային կառույցների, Հայաստանի մեդիաոլորտի փորձագետների գնահատականները, Հանձնաժողովի ուսումնասիրությունները, Հեռարձակողների հետ գործնական շփումները:

Մասնավորապես, ս.թ. հունվարին կարգավորող մարմինը գրավոր դիմել էր լիցենզավորված եւ հեղինակազորված տեսալսողական ծառայություն մատուցող բոլոր ընկերություններին՝ «Հանձնաժողով ներկայացնել 2022 թվականի ընթացքում խմբագրական եւ կադրային քաղաքականությանը միջամտելու կամ միջամտելու փորձերի, կարծիքների արտահայտման իրավունքը սահմանափակելու, հեռարձակողների բնականոն աշխատանքը խոչընդոտելու վերաբերյալ տեղեկատվություն, մասնավորապես, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական պաշտոնյաների, կուսակցությունների, քաղաքական, հասարակական եւ տնտեսական կազմակերպությունների եւ այլ իրավաբանական ու ֆիզիկական անձանց կողմից»:

Պատասխան նամակներում Հեռարձակողների խմբագրական եւ կադրային քաղաքականությանը միջամտելու կամ միջամտելու փորձերի, կարծիքների արտահայտման իրավունքը սահմանափակելու, Հեռարձակողների բնականոն աշխատանքը խոչընդոտելու վերաբերյալ խնդրահարույց բողոքներ չեն եղել:

Այդուհանդերձ, «Շարկ» ՍՊԸ-ն Հանձնաժողովի ուշադրությունն էր հրավիրել (մեջբերում)՝ «Խորհրդարանական մեծամասնության ներկայացուցիչների պահվածքի վրա, որոնք լրագրողների հարցադրումներին արձագանքում են զայրույթով, օգտագործում են զրպարտության տարրեր պարունակող վիրավորական հռետորաբանություն»:

Հանձնաժողովի համար եւս նկատելի են Ազգային ժողովի որոշ պատգամավորների խտրական, անհարգալից վերաբերմունքի դրսեւորումները լրատվամիջոցների եւ լրագրողների նկատմամբ: Այդուհանդերձ, դիտարկումները ցույց են տալիս, որ նմանօրինակ դրսեւորումները համակարգված բնույթ չեն կրել:

Կարգավորող մարմինն, օգտվելով Տարեկան հաղորդում ներկայացնելու հնարավորությունից, հերթական անգամ բարձրաձայնում եւ հիշեցնում է, որ լրագրողների գործունեությունը կարեւորագույն նշանակություն ունի հանրության, քաղաքացիական հասարակության եւ պետության համար, ուստի՝ օրենդիր, գործադիր եւ դատական իշխանության մարմինների ներկայացուցիչները պետք է ցուցաբերեն առավելագույն հարգանք եւ զսպվածություն լրագրողների նկատմամբ, բացառեն կանխակալ եւ կողմնակալ վերաբերմունքը լրագրողների մասնագիտական կարողությունների եւ հմտությունների առնչությամբ:

2022 թվականին Հանձնաժողովն, ինչպես եւ նախորդ չորս տարիների ընթացքում, իր լիազորությունների շրջանակներում պաշտպանել է Հեռարձակողների ինքնուրույն խմբագրական քաղաքականություն վարելը, հանդես եկել այդ իրավունքը հիմնավորող եւ պաշտպանող հայտարարություններով, միջնորդություններով եւ պարզաբանումներով, բազմիցս միջնորդի դեր ստանձնել Հեռարձակողների եւ իշխանության տարբեր ինստիտուտների միջեւ, համագործակցել տեսալսողական մեդիայի խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ:

Հանձաժողովի վերոշարադրյալ, ընդհանուր առմամբ, դրական գնահատականը, սակայն, ամենեւին չի նշանակում, որ հեռարձակող լրատվամիջոցների համար ստեղծված են առանց մարտահրավերների, ազատ եւ անկախ գործելու բոլոր հնարավորությունները: Ոլորտի բնականոն գործունեությանը խոչնդոտում են մի շարք գործոններ, որոնց թվում են՝

**ա.** վերջին տարիների ընթացքում գովազդի ծավալների անկումը (2019-2022 թթ. գովազդային մուտքերի ծավալները ներկայացված են ***Հավելված N 1-ում***),

**բ.** եթերային հեռարձակողների՝ տեսալսողական ծրագրերի դիտողականության շարունակական անկումն ու կարգավորման ներքո գտնվող Հեռարձակողների եւ համացանցում տեսալսողական ծառայություններ մատուցող ընկերությունների միջեւ մրցակցային անհավասար պայմանները,

**գ.** սահմանափակ ռեսուրսի (սլոթերի եւ հաճախականությունների) օգտագործման պետական հայեցակարգի, ռազմավարության բացակայությունն ու օրենսդրության անկատարությունը:

Այս համատեքստում կարեւոր ենք համարում Ազգային ժողովի ուշադրությունը հրավիրել հետեւյալի վրա. լիցենզավորված Հեռարձակողների գովազդային մուտքերի կրճատումը նաեւ հետեւանք է վերջին տարիներին «Տեսալսողական մեդիայի մասին», «Գովազդի մասին» օրենքներում կատարված բոլոր փոփոխությունների:

Կասկածի տակ չդնելով օրենսդրական փոփոխությունների հանրային կարեւորությունը (շահումով խաղերի գովազդի արգելքի, հանրօգուտ հաղորդումների նվազագույն քանակի ամրագրման, հայերեն հաղորդումների քանակի նվազագույն շեմի բարձրացման եւ այլն)՝ այնուամենայնիվ, պետք է արձանագրենք, որ օրենսդրական պահանջների խստացման հետեւանքով ավելացել են հաղորդումների վրա ծախսվող ֆինանսական միջոցներն, իսկ գովազդային գործունեությունից ստացվող եկամուտները՝ նվազել:

Նշված եւ այլ գործոնները զրկում են Հեռարձակողներին ֆինանսական անկախությունից, որակյալ բովանդակություն պատրաստելուց եւ տարածելուց: Հիմնադիրներից եւ սեփականատերերից, քաղաքական ուժերից ֆինանսական կախվածությունը սահմանափակում է Հեռարձակողների խմբագրական անկախությունը, նպաստում քարոզչական բաղադրիչի ավելացմանը, տեղեկատվության մատուցման կողմնակալությանը եւ այլն: Հեռարձակողը ստիպված է լինում սահմանափակել խմբագրական անկախությունը՝ եկամտի աղբյուրների կորստից խուսափելու համար:

Հանձնաժողովի մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ հանրային մուլտիպլեքսում գործող լիցենզավորված Հեռարձակողների հաղորդումներում նախորդ տարվա համեմատությամբ[1] զգալիորեն նվազել են ատելության խոսքը, վիրավորանքը, սպառնալիքը: Վերջինս պայմանավորված է մի քանի գործոններով, որոնց թվում է՝ Հանձնաժողովի սկզբունքային պայքարը խոսքի ազատության չարաշահումների դեմ:

Այնուամենայնիվ, Հանձնաժողովն եւս մեկ անգամ մատնանշում է, որ որոշ Հեռարձակողների խմբագրական եւ կադրային քաղաքականությունը հաճախ հիմնված է նրանց հիմնադիրների, սեփականատերերի քաղաքական պատվերների վրա:

Վերը շարադրվածը թույլ է տալիս արձանագրել, որ ազատ եւ անկախ մեդիածառայություններ մատուցողների էկոհամակարգն, իրականում, Հայաստանում կայացած չէ, ինչը կբնութագրվեր Հեռարձակողների լիարժեք անկախությամբ, ազատությամբ, բազմակարծությամբ եւ բազմազանությամբ, որոնք կոչված են

[1] Տես՝ http://tvradio.am/wp-content/uploads/2022/03/2021-report.pdf, Տարեկան հաղորդում 2021, էջ՝ 7

սպասարկելու ՀՀ քաղաքացու իրավունքը՝ ստանալ անկողմնակալ, բազմաբնույթ տեղեկատվություն:

## 3 ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ, ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

***«Կարգավորող պետական մարմինը, կարգավորող պետական մարմնի անդամները եւ կարգավորող պետական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցներն իրենց լիազորություններն իրականացնելիս անկախ են եւ ենթարկվում են միայն օրենքին: Չի թույլատրվում անօրինական ազդեցություն եւ միջամտություն նրանց գործունեությանը» («Տեսալսողական մեդիայի մասին» օրենք, հոդված 32, 9-րդ մաս):***

Հանձնաժողովը տեղեկացնում է, որ 2022 թվականին գործել է անկախ, որոշումները կայացրել է ինքնուրույն, առանց արտաքին ազդեցության: Պետական մարմինների ներկայացուցիչները, քաղաքական ուժերը չեն միջամտել Հանձնաժողովի աշխատանքներին, որոշումների կայացմանը, մարդկային ռեսուրսների ընտրությանն ու նշանակմանը:

Չնայած Ազգային ժողովում ներկայացված, ինչպես նաեւ արտախորհրդարանական քաղաքական ուժերի, զանգվածային լրատվամիջոցների որոշ ներկայացուցիչներ հանրային ելույթներում, հրապարակումներում փորձել են կասկածի տակ դնել Հանձնաժողովի որոշումների անաչառությունը, որակել դրանք որպես իշխանությունների կողմից իջեցված «քաղաքական պատվերի» կատարում, սակայն այդ մեղադրանքները հիմնավորող որեւէ փաստ կամ վկայություն չեն ներկայացրել:

Հանձնաժողովը բազմիցս հայտարարել է, որ կարգավորող մարմնի որոշումներին առնչվող մասնագիտական հիմնավորումների փաստաթղթային փաթեթները բաց են հասարակության համար. ցանկության դեպքում կարող են ծանոթանալ հիմնավորումներին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ստանալ կարգավորող մարմնի պարզաբանումները: Քանի որ ո՛չ մի լրատվամիջոց, քաղաքական եւ հասարակական գործիչ, պարզապես «մտահոգ» քաղաքացի այդպիսի պահանջով Հանձնաժողով չի դիմել, ապա կարող ենք արձանագրել, որ այդպիսի մեղադրանքները մերկապարանոց են, ունեն քաղաքական շահարկման եւ Հանձնաժողովի հանդեպ վստահությունը խաթարելու նպատակ:

Կարգավորող պետական մարմինն իր գործունեությունը կազմակերպում է նիստերի եւ աշխատանքային քննարկումների միջոցով, եւ գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականության ապահովումը Հանձնաժողովի առանցքային սկզբունքներից է:

Հանձնաժողովի նիստերն անցկացվում են դռնբաց (բացառությամբ գաղտնիություն պարունակող եւ հրապարակման ոչ ենթակա հարցերի), ինչպես նաեւ տեսաձայնագրվում են եւ արխիվացվում: Հաշվետու տարվա ընթացքում Հանձնաժողովը գումարել է 55 նիստ:

***Գծապատկեր 1.*** *2019-2022 թվականներին Հանձնաժողովի կողմից գումարած նիստերի համեմատական պատկերը*




2022 թվականի մայիսին կարգավորող պետական մարմինը ձեռք է բերել տեսաձայնագրման նոր համակարգ: Հաճախ, կախված հարցի կարեւորությունից եւ հանրային հետաքրքրությունից, նիստերն ուղիղ հեռարձակվել են Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում եւ ֆեյսբուքյան, յութուբյան էջերում: Մասնավորապես՝ ուղիղ հեռարձակմամբ ցուցադրվել են լիցենզավորման բոլոր մրցույթները:

2022 թվականին Հանձնաժողովի պաշտոնական կայքէջը՝ (www.tvradio.am), ֆեյսբուքյան էջը՝ (https://www.facebook.com/tvradio.Armenia/) գործել են անխափան, պատշաճ եւ ժամանակին ներկայացրել Հանձնաժողովի աշխատանքը, ձեռք բերված արդյունքները, ապահովել հետադարձ կապը քաղաքացիների հետ:

Տարվա ընթացքում Հանձնաժողովը կազմակերպել է բազմաթիվ քննարկումներ, դասընթացներ (այդ թվում՝ առցանց եղանակով) լիցենզավորված Հեռարձակողների եւ ցանցային օպերատորների ներկայացուցիչների մասնակցությամբ: Մասնագիտական էթիկայի պահպանման, կարգավորող մարմնի կողմից ընդունված նոր կարգերի կիրառման թեմաներով քննարկումներ եւ դասընթացներ են անցկացվել հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզիա ստացած հեռարձակողների համար:

Պարբերաբար հանդիպումներ են կազմակերպվել մարզային, մայրաքաղաքային եւ հանրապետական սփռում ունեցող հեռուստաընկերությունների ղեկավարների հետ:

Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ հանրային իրազեկման նպատակով կազմակերպվել եւ անցկացվել են ճեպազրույցներ, հարցազրույցներ: Հանրային հետաքրքրություն ներկայացնող թեմաների վերաբերյալ պատրաստվել են մամուլի հաղորդագրություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ: Մասնավորապես, Հանձնաժողովի պաշտոնական կայքում հրապարակվել է 131 մամուլի հաղորդագրություն եւ հայտարարություն, կարգավորող մարմնի նախագահի, անդամների եւ անձնակազմի աշխատակիցների հետ լրատվամիջոցները հրապարակել են ավելի քան 50 հարցազրույց:

Հեռարձակող կազմակերպությունների եւ մեդիամասնագետների համար Հանձնաժողովը պարբերաբար պատրաստել եւ հրապարակել է մեդիաշուկայի հետազոտության արդյունքների վերաբերյալ տեղեկատվական նյութեր, վերլուծական հոդվածներ, գծապատկերներ, մշտադիտարկման արդյունքների ամփոփագրեր եւ այլն:

## 4 ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՈԼՈՐՏԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020 թվականին «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումը, ինչպես նաեւ հարակից օրենքներում իրականացված փոփոխությունները, մասնավորապես, «Գովազդի մասին», «Լիցենզավորման մասին», «Զանգվածային լրատվության մասին», էական ազդեցություն ունեցան տեսալսողական մեդիայի ոլորտի գործունեությունը կարգավորելու ուղղությամբ:

Այդուհանդերձ, կարեւոր ենք համարում ներկայացնել կարգավորման ենթակա եւ մեդիալորտի զարգացման համար խոչընդոտներ առաջացնող օրենսդրական բացերը: Դրանց մի մասը ներկայացվել է դեռեւս 2021 թվականի Տարեկան հաղորդման մեջ[2], որոնց ավելացել են նո՛ր խնդիրներ, եւ այո՛, կա՛ օրենսդրական նոր նախաձեռնությունների եւ փոփոխությունների անհրաժեշտություն:

Մասնավորեցնելով նշենք, որ անհրաժեշտ օրենսդրական կարգավորումների մի մասն առնչություն ունի Հանձնաժողովին վերապահված գործառույթներին, մյուս մասը՝ մեդիաոլորտին:

---

[2] **Տես**՝ Տարեկան հաղորդում 2021՝ http://tvradio.am/wp-content/uploads/2022/03/2021-report.pdf

Այսպես՝

- Օրենքով Հանձնաժողովին լիազորել քանակական եւ որակական վիճակագրական տվյալների ուսումնասիրություններ իրականացնելու գործառույթ, որը կնպաստի հեռարձակողների եւ ցանցային օպերատորների գործունեության մշտադիտարկման արդյունքների ուսումնասիրությունների եւ վերլուծությունների գործընթացի արդյունավետ իրականացմանը:

- Տեսալսողական մեդիածառայություն մատուցողների գործունեությանը, ինչպես նաեւ լրագրողական աշխատանքին վերաբերող ուղեցույցների, մեդիաոլորտին վերաբերող օրենքների եւ այլ իրավական ակտերի դրույթների կիրառման վերաբերյալ խորհրդատվական ուղենիշների, հայտարարությունների, պարզաբանումների կազմման եւ հրապարակման գործառույթ վերապահել Հանձնաժողովին՝ ոլորտային աշխատանքի առանձնահատկություններն ու հանրային նշանակությունը հաշվի առնելով:

- «Զանգվածային լրատվության մասին» օրենքի (այսուհետ՝ ԶԼՄ օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն զանգվածային լրատվության միջոց է դիտարկվում լրատվություն իրականացնելու միջոցը, որը բաժանորդագրությամբ կամ առանց դրա, վճարովի կամ անվճար հիմունքներով, ի թիվս այլնի, տարածվում է համացանցում սեփական կամ վարձակալած դոմեյն, հոսթինգ ունեցող եւ սույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերում նշված տեղեկությունները պարունակող կայքի միջոցով:

Նույն հոդվածի 3-րդ կետն ամրագրում է, որ լրատվական գործունեություն իրականացնողը իրավաբանական կամ ֆիզիկական անձ է, այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր, որն իր անունից տարածում է լրատվության միջոց: ԶԼՄ օրենքի 11-րդ հոդվածում իբրեւ այդպիսի տեղեկություններ նշվում են՝ 1) լրատվության միջոցի անվանումը, 2) լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձեւը, գտնվելու վայրը, իրավաբանական անձի պետական գրանցման (կամ իրավաբանական անձի անունից գործող նրա առանձնացված ստորաբաժանման հաշվառման) վկայականի համարը, տրման օրը, իսկ եթե լրատվական գործունեություն իրականացնողը ֆիզիկական անձ է, ապա նրա անունը, ազգանունը, հասցեն, եթե նա անհատ ձեռնարկատեր է, ապա նաեւ պետական գրանցման վկայականի համարը եւ տրման օրը, 3) լրատվության միջոցի տվյալ թողարկման համար պատասխանատու անձի անունը, ազգանունը (ըստ անձնագրի), 4) տվյալ թողարկման տարին, ամիսը եւ ամսաթիվը, 5) տվյալ թողարկման հերթական համարը, 6) տվյալ թողարկման օրինակների ընդհանուր քանակը:

Օրենսդրական մեջբերված դրույթների համեմատական դիտարկումը թույլ է տալիս եզրահանգելու, որ ԶԼՄ օրենքի՝ 2020 թվականի մարտի 6-ի փոփոխությունների արդյունքում համացանցում լրատվական գործունեությունը եւս դիտարկվում է իբրեւ

լրատվություն՝ լրատվության միջոցի տեխնիկական եւ բովանդակային վերոնշյալ պայմանների առկայության դեպքում:

Հետեւաբար, տեսալսողական մեդիա ծառայությունների վերաբերյալ օրենքի շրջանակներում պետք է կարգավորվեն նաեւ համացանցում տեսալսողական հաղորդակցության այն բոլոր տեսակները, որոնք գտնվում են ծառայություն մատուցողի, խմբագրական անձնակազմի պատասխանատվության ներքո: Սա ներառում է ո՛չ միայն տեսալսողական եւ լսողական ծրագրեր հեռարձակողներին, այլ նաեւ ըստ պահանջի ծառայությունները (անկախ նրանից, թե ինչ հատուկ տեխնոլոգիա եւ հարթակ են օգտագործվել դրանք բաշխելու համար):

- Պետք է ընդգծել, որ զանգվածային լրատվության միջոցների գործունեության վերաբերյալ օրենսդրությունը չի անդրադառնում ատելության խոսքի կարգավորմանը: Ատելության խոսքի ընդհանուր եւ միասնական սահմանումը բացակայում է. միջազգային կազմակերպությունները, իրավական նորմերը, պետությունները հաշվի են առնում մի շարք չափանիշներ, երեւույթներ, իրադարձություններ, որոնք տվյալ պահին ազդում են սահմանման վրա:

Տեսալսողական հաղորդումների չարաշահման արգելքը՝ կապված օրենսդրությամբ արգելված արարքների կոչերի, ազգային, ռասայական կամ կրոնական ատելության եւ թշնամանքի հրահրման, ինչպես նաեւ այլ տեղեկատվության տարածման հետ, ամրագրված է Օրենքի 9-րդ հոդվածով:

Սակայն անորոշություն է տիրում նաեւ այս հարցում՝ ատելության խոսքը որ պարագայում է սահմանում ո՛չ թե քրեական, այլ՝ քաղաքացիական պատասխանատվություն: Հետեւաբար, Օրենքն, երաշխավորելով խոսքի եւ կարծիքի ազատությունը եւ խտրականության բացառումը, պետք է նաեւ սահմանի հստակ չափանիշներ, ինչը կնպաստի ապատեղեկատվության, ատելության խոսքի, բռնության քարոզի նվազեցմանը:

Օրենքի կարեւորագույն սահմանված նորմերից է տեսալսողական հաղորդումներում հավաստի տեղեկատվության ապահովումը, որը ներառում է բազմաթիվ հասկացություններ: Սակայն Օրենքի այս դրույթը Հանձնաժողովին ամբողջությամբ գործիքակազմ չի տրամադրում այն ծավալի հասարակական հարաբերությունների կարգավորման, որը ենթադրում է առաջին հերթին սպառողների շահերի պաշտպանությունը եւ հավաստի տեղեկատվության ապահովումը տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից: Ավելին, եվրոպական դիրեկտիվներում հավաստի տեղեկատվության ապահովման նպատակների համար ամրապնդվում է համապատասխան միջոցներ ձեռնարկելու հանձնառությունը, ինչն էլ ապահովում է, որպեսզի դրանք ենթակա չլինեն խոչընդոտող իրավական արգելքների:

• Օրենքի եւս մեկ կարեւոր նորմը՝ յուրաքանչյուր անձի կողմից տեսալսողական մեդիածառայություն մատուցողների միջոցով կարեւոր իրադարձությունների մասին տեղեկություն ստանալու իրավունքն է: Հանձնաժողովը պետք է հնարավորություն ունենա միջոցներ ձեռնարկելու, որպեսզի պաշտպանի հասարակության՝ կարեւոր իրադարձությունների մասին տեղեկատվություն ստանալու իրավունքը:

Օրենքի այս դրույթի իրականացման եւ Հանձնաժողովի կողմից կարեւոր իրադարձությունների շրջանակը սահմանելու համար եւս պետք են օրենսդրական փոփոխություններ:

• Հեղինակազորումն Օրենքով սահմանված նոր կարգավորումներից է. սկսել է գործել 2020 թվականի օգոստոսի 7-ին Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո: Կիրառելու արդյունքում առաջացրել է որոշ խնդիրներ, ինչը հանգեցնում է մեդիա ոլորտի ոչ լիարժեք վերահսկողության:

Կարծում ենք՝ Օրենքում հեղինակազորման գործընթացի կարգավորման դրույթները եւս բարելավման կարիք ունեն:

• Տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորները Հանձնաժողովի կարգավորման ներքո են գտնվում 2020 թվականի օգոստոսի 7-ին Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո:

Դիստրիբյուտորների գործունեության նկատմամբ վերահսկողությունն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է ընդլայնել օրենսդրական կարգավորման շրջանակը, ինչը կնպաստի ոլորտում այս գործառույթի հետ կապված խնդիրները նվազագույնի հասցնել:

• Հանձնաժողովի վերահսկողական գործունեության կատարման ընթացքում վեր են հանվել նաեւ գործող օրենսդրության բացերը, որոնք խոչընդոտում են մշտադիտարկումների արդյունքում արձանագրված խախտումների առնչությամբ պատշաճ վարչարարության իրագործմանը:

• Հայկական մեդիադաշտում ինքնակարգավորման մարմինների գործունեության արդյունավետությունն ապահովելու նպատակով, ինչպես նաեւ էթիկայի նորմերի պահպանման տեսանկյունից Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություններ, որոնք կամրագրեն կարգապահական տույժեր էթիկայի նորմերի շարունակական խախտումների համար:

# 5 ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետությունում 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ գործել է 115 լիցենզավորված ընկերություն՝

- 22 տեսալսողական մեդիածառայություն մատուցող,
- 28 լսողական մեդիածառայություն մատուցող,
- 65 ցանցային օպերատոր:

Հեղինակազորվել է 59 ընկերություն, որոնցից 30-ը լիցենզավորվել են:

***Գծապատկեր 2.*** *Հայաստանի Հանրապետությունում տեսալսողական մեդիածառայություն մատուցողներ*




Օրենքի համաձայն առանց լիցենզիայի Հայաստանի Հանրապետությունում հեռարձակվել է Հանրային հեռարձակողի՝

- 2 տեսալսողական ծրագիր,
- 4 լսողական ծրագիր,

իսկ միջպետական պայմանագրերի հիման վրա՝

- 4 տեսալսողական ծրագիր,
- 2 լսողական ծրագիր:

***Գծապատկեր 3.*** *Առանց լիցենզիայի հեռարձակում իրականացնողներ*




## ՀԵՂԻՆԱԿԱՅՆՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

6

*«Հեղինակազորումը կարգավորող պետական մարմնի կողմից ֆիզիկական կամ իրավաբանական անձին Հեռարձակողի կարգավիճակ տվող փաստաթղթի տրամադրումն է» («Տեսալսողական մեդիայի մասին» օրենք, 3-րդ հոդված, 1-ին մաս, 23-րդ կետ):*

2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հեղինակազորված ընկերությունների տեսալսողական ծրագրերի ընդհանուր թիվը 107 է, որոնց մի մասը հեռարձակվում է հանրային մուլտիպլեքսում, իսկ մյուս մասը վերահաղորդվում է ցանցային օպերատորների կողմից (***Տես՝ Հավելված N 2***):

Հեղինակազորման փաստաթուղթը՝ վկայագիրը, Հանձնաժողովի կողմից տրամադրվում է պարզեցված ընթացակարգով եւ անժամկետ: Հեղինակազորումն իրավաբանական կամ ֆիզիկական անձին հնարավորություն է տալիս առանց լիցենզիայի մատուցել տեսալսողական մեդիածառայություն՝ ցանցային օպերատորի, իսկ մասնավոր մուլտիպլեքս օպերատորի հիմնադրման դեպքում նաեւ մասնավոր մուլտիպլեքս օպերատորի միջոցով:

Կարգավորող պետական մարմնի կողմից 2022 թվականին հեղինակազորվել է 9 իրավաբանական եւ ֆիզիկական անձ, համաձայն դիմումի դադարեցվել է հեղինակազորման 3 վկայագրի գործողությունը:

*Աղյուսակ 1. 2022 թվականին տրամադրված հեղինակազորման վկայագրեր*

| Հ/Հ | ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿԱՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԵՂԻՆԱԿԱԶՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԳՐԻ ՏՐՄԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ |
|---|---|---|
| 1 | «ՌԱԴԱՐ ԱՐՄ» ՍՊԸ | 24.02.2022 թ. |
| 2 | «ԽՈՒՍՏՈՒՓ ԷՖ ԷՄ» ՍՊԸ | 16.03.2022 թ. |
| 3 | «ՏԻՆՍ» ՍՊԸ | 08.04.2022 թ. |
| 4 | «ՄԵՐԻ ՄԿՐՏՉՅԱՆ ՀՐԱՉՅԱՅԻ» ԱՁ | 13.04.2022 թ. |
| 5 | «ՅԱՆ ԹԻՎԻ» ՍՊԸ | 26.04.2022 թ. |
| 6 | «ԻՐԻԴԱ ԳԼՈԲԱԼ» ՍՊԸ | 06.05.2022 թ. |
| 7 | «ՏՈՍՊԱ» ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ | 30.05.2022 թ. |
| 8 | «ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ» ՍՊԸ | 04.07.2022 թ. |
| 9 | «ՌԻԲՈԼՈՎՆՈԵ ԹՎ» ՍՊԸ | 21.10.2022 թ. |

# 7 ՀԱՆՐԱՅԻՆ ՄՈՒԼՏԻՊԼԵՔՍ ՑԱՆՑՈՒՄ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐ

## *7.1 Լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցողներ*

Հաշվետու տարվա ընթացքում լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցող 22 ընկերություն հեռարձակում է իրականացրել հանրային մուլտիպլեքս ցանցում՝ 5-ը հանրապետական, 7-ը մայրաքաղաքային և 10-ը մարզային սփռման:

***Գծապատկեր 4.*** *Հանրային մուլտիպլեքս ցանցում լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցող ընկերություններ*



### 7.1.1 Հանրապետական սփռում իրականացնող լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցողներ

«ԱՐՄԵՆԻԱ» ծրագիր
«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲԸ

«ՇԱՆԹ» ծրագիր
«ՇԱՆԹ» ՍՊԸ

«ԵՐԿԻՐ ՄԵԴԻԱ» ծրագիր
«ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲԸ

«Ա-ԹԻՎԻ» ծրագիր
«Ա-ԹԻՎԻ» ՍՊԸ

«ԿԵՆՏՐՈՆ» ծրագիր
«ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ

### 7.1.2 Մայրաքաղաքային սփռում իրականացնող լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցողներ

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԱԼԻՔ» ծրագիր
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

«ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ծրագիր
«ՄՈ ԹԻՎԻ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ

«21 TV» ծրագիր
«ԴԱՐ-21» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

«ՖՐԻ ՆՅՈՒԶ» ծրագիր
«ՖՐԻ ՆՅՈՒԶ» ՍՊԸ

«:ԲՈՒՆ ԹԻՎԻ» ծրագիր
*«:ԲՈՒՆ» գիտամշակութային հիմնադրամ*

«5-ՐԴ ԱԼԻՔ» ծրագիր
«ՇԱՐԿ» ՍՊԸ

«ՆՈՒՌ» ծրագիր
«ԱՌՓԻ ՄԵԴԻԱ» ՍՊԸ

### 7.1.3 Մարզային սփռում իրականացնող լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցողներ

| | |
|---|---|
| *Արագածոտնի մարզ* | «ԴԵԼՏԱ ԹԻՎԻ» ծրագիր<br>«ԴԵԼՏԱ ԹԻՎԻ» ՍՊԸ |
| *Արարատի մարզ* | «ԱՐԱՐԱՏ ԹԻՎԻ» ծրագիր<br>«ԷՖ ԹԻՎԻ» ՍՊԸ |
| *Շիրակի մարզ* | «ՑԱՅԳ» ծրագիր<br>*«ՑԱՅԳ» ՍՊԸ* |
| *Լոռու մարզ* | «ՖՈՐՏՈՒՆԱ» ծրագիր<br>*«ՖՈՐՏՈՒՆԱ» ՍՊԸ* |
| *Վայոց ձորի մարզ* | *«ՍՅՈՒՆԻՔ ՏՎ» ծրագիր*<br>*«ՁԱԳԵՁՈՐ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ* |
| *Արմավիրի մարզ* | «ԱՐՄԱ ԹԻ-ՎԻ» ծրագիր<br>«ԱՐԱՆԵԱ» ՍՊԸ |
| *Գեղարքունիքի մարզ* | *«ԳԵՂԱՄԱ» ծրագիր*<br>*«ԳԵՂԱՄԱ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ* |
| *Կոտայքի մարզ* | *«ԿՈՏԱՅՔ ԹԻՎԻ» ծրագիր*<br>*«ԿՈՏԱՅՔ ԹԻՎԻ» ՍՊԸ* |
| *Սյունիքի մարզ* | *«ՍՅՈՒՆԻՔ ՏՎ» ծրագիր*<br>*«ՁԱԳԵՁՈՐ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ* |
| *Տավուշի մարզ* | *«ՏԱՎՈՒՇ ՏՎ» ծրագիր*<br>*«ՏԱՎՈՒՇ ՄԵԴԻԱ» ՍՊԸ* |

## *7.2 Լիցենզավորված լսողական մեդիածառայություն մատուցողներ*

Հաշվետու տարվա ընթացքում լիցենզավորված լսողական մեդիածառայություն մատուցող 28 ընկերությունից 3-ը գործել է Հայաստանի Հանրապետության, 16-ը՝ Երեւան քաղաքի եւ 9-ը՝ մեկ մարզի տարածքում:

***Գծապատկեր 5.*** *Լիցենզավորված լսողական մեդիածառայություն մատուցող ընկերություններ*



### 7.2.1 Հանրապետական սփռում իրականացնող լիցենզավորված լսողական մեդիածառայություն մատուցողներ

«ՌԱԴԻՈ ԵՐԵՎԱՆ» ծրագիր
«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊԸ

«ՌԱԴԻՈ ՋԱՆ» ծրագիր
«ՌԱԴԻՈ ՊՌՈ»ՍՊԸ

«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ծրագիր
«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊԸ

### 7.2.2 Մայրաքաղաքային սփռում իրականացնող լիցենզավորված լսողական մեդիածառայություն մատուցողներ

«ԱՎՏՈՌԱԴԻՈ» ծրագիր
«ԱՎՏՈՌԱԴԻՈ» ՍՊԸ

«ՌՈՒՍՍԿՈՅԵ ՌԱԴԻՈ» ծրագիր
«ՌԱԴԻՈ ԱԼՖԱ» ՍՊԸ

«ՌԱԴԻՈ ՄԱՐՇԱԼ» ծրագիր
«ԱՐՁԱԳԱՆՔ ՏՍ.» ՍՊԸ

«ԼՐԱՏՎԱԿԱՆ ՌԱԴԻՈ» ծրագիր
«ԻՄՊՈՒԼՍ» ՍՊԸ

«ՖՄ-105.5» ծրագիր
«ՖՄ-105.5» ՍՊԸ

«ՌԱԴԻՈ ՎԱՆ» ծրագիր
«ՌԱԴԻՈ ՎԱՆ» ՍՊԸ

«ԱՐՄՆՅՈՒԶ ՖՄ» ծրագիր
«ՌԱԴԻՈ 107 ՖՄ» ՍՊԸ

«ՔԻՍՍ ԷՖ ԷՄ» ծրագիր
«ՔԻՍՍ ԷՖ ԷՄ» ՍՊԸ

«ԵՎՐՈՊԱ ՊԼՅՈՒՍ» ծրագիր
«ՌԱԴԻՈՏՈՒՆ» ՍՊԸ

«ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ծրագիր
«ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊԸ

«ՌԱԴԻՈ ՇԱՆՍՈՆ» ծրագիր
«ՇԱՆՍ ՄԵԴԻԱ» ՍՊԸ

«ՓՈՓ ԷՖ ԷՄ» ծրագիր
«Է3 ԴԻ ԹԻ» ՍՊԸ

«ՍՊՈՒՏՆԻԿ ԱՐՄԵՆԻԱ» ծրագիր
«ՏՈՍՊԱ» ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

«ՏՈՏՈ ՍՊՈՐՏ» ծրագիր
«ՀԻԲՐԻԴ ԲՐՈԴՔԱՍԹԻՆԳ» ՍՊԸ

«ԷՖ ԷՄ ՌԱԴԻՈ» ծրագիր
«ԷՖ-ԷՄ» ՍՊԸ

«ՉԱՐՎ ՖՄ» ծրագիր
«ՉԱՐՎ ՄԵԴԻԱ» ՍՊԸ

### 7.2.3 Մարզային սփռում իրականացնող լիցենզավորված լսողական մեդիածառայություն մատուցողներ

*Արարատի մարզ*

«ԱՐԱՐԱՏ ՌԱԴԻՈ» ծրագիր
«ԷՖ ԹԻՎԻ» ՍՊԸ

*Լոռու մարզ*

«ՄԻԳ» ծրագիր
*«ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊԸ*

«ՄԵԿ ԷՖ ԷՄ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ» ծրագիր
*«ԷՖ-ԷՄ» ՍՊԸ*

*Գեղարքունիքի մարզ*

ՌՈՒՍՍԿՈՅԵ ՌԱԴԻՈ» ծրագիր
*«ՌԱԴԻՈ ԱԼՖԱ» ՍՊԸ*

*Շիրակի մարզ*

«ՇԱՆԹ» ծրագիր
*«ՇԱՆԹ» ՍՊԸ*

«ՌԱԴԻՈ ՎԱՆ ԳՅՈՒՄՐԻ» ծրագիր
*ՄԵՐԻ ՄԿՐՏՉՅԱՆ ՀՐԱՉՅԱՅԻ ԱՁ*

*Սյունիքի մարզ*

«ՄԵԿ ԷՖ ԷՄ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ» ծրագիր
*«ԷՖ-ԷՄ» ՍՊԸ*

*Վայոց ձորի մարզ*

«ՄԵԿ ԷՖ ԷՄ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ» ծրագիր
*«ԷՖ-ԷՄ» ՍՊԸ*

*Արագածոտնի մարզ*

«ՄԵԿ ԷՖ ԷՄ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ» ծրագիր *«ԷՖ-ԷՄ» ՍՊԸ*

## *7.3. Առանց լիցենզիայի տեսալսողական ծրագրեր հեռարձակողներ*

### *7.3.1 Հանրային հեռարձակողներ*

Հայաստանի Հանրապետությունում 2022 թվականին առանց լիցենզիայի հեռարձակվել են Հանրային հեռարձակողի 2 տեսալսողական՝ հանրապետական սփռման «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի «Հանրային հեռուստաընկերության առաջին ալիք» եւ «Հոգեւոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի «Շողակաթ», ինչպես նաեւ 4 լսողական՝ «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի հանրապետական սփռման «Առաջին ծրագիր» եւ մայրաքաղաքային սփռման «Իմ ռադիո», «ՎԷՄ» կրթական-մշակութային եւ «Արեւիկ» մանկապատանեկան ծրագրերը:

«ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ» ծրագիր
*«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ*

«ՇՈՂԱԿԱԹ» ծրագիր
*«ՀՈԳԵՎՈՐ–ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ*

«ԱՌԱՋԻՆ ԾՐԱԳԻՐ» ծրագիր
*«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ*

«ՎԷՄ» կրթական-մշակութային ծրագիր
*«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ*

«ԱՐԵՎԻԿ» ծրագիր
*«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ*

«ԻՄ ՌԱԴԻՈ» ծրագիր
*«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ*

### *7.3.2 Օտարերկրյա տեսալսողական ծրագրեր հեռարձակողներ*

Հանրային մուլտիպլեքսում օտարերկրյա տեսալսողական ծրագրերի հեռարձակումն իրականացվում է առանց լիցենզիայի՝ միջպետական պայմանագրի հիման վրա:

Համաձայն ՀՀ եւ ՌԴ կառավարությունների միջեւ 2020 թվականի դեկտեմբերի 30-ին կնքված «Զանգվածային հեռահաղորդակցության ոլորտում համագործակցության մասին» համաձայնագրի՝ հեռարձակվում են հանրապետական սփռման 1 տեսալսողական՝ «ՌՏՌ-Պլանետա» եւ մայրաքաղաքային սփռման 2 տեսալսողական՝ «Ռոսիյա-Կ», «Առաջին ալիք. Համաշխարհային ցանց» ծրագրերը:

«ՌՏՌ-ՊԼԱՆԵՏԱ» ծրագիր

«ՌՈՍԻՅԱ-Կ» ծրագիր

«ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՑԱՆՑ» ծրագիր

Միջպետական պայմանագրերի հիման վրա հեռարձակվում են նաեւ մայրաքաղաքային սփռման «ՄԻՐ» միջպետական հեռուստառադիոընկերության Հայաստանի Հանրապետության ազգային մասնաճյուղի «ՄԻՐ» տեսալսողական ծրագիրը (ռուսերեն) եւ «ՄԻՐ» միջպետական հեռուստառադիոընկերության Հայաստանի Հանրապետության ազգային մասնաճյուղի «ՄԻՐ» (ռուսերեն) եւ Ֆրանսիայի միջազգային ռադիոյի (RFI) «Էռ Էֆ Այ» (ֆրանսերեն) լսողական ծրագրերը:

«ՄԻՐ» ծրագիր
«ՄԻՐ» ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՀՀ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

«ՄԻՐ» լսողական ծրագիր
«ՄԻՐ» ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՀՀ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

«RFI» ռադիոծրագիր
Ֆրանսիայի միջազգային ռադիո

# 8 ՄԱԼՈՒԽԱՅԻՆ ԿԱՄ ԱՅԼ ՑԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՂ ՑԱՆՑԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ

*«Ցանցային օպերատորը ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը սեփականության կամ այլ իրավունքով ունի մալուխային կամ այլ ցանց (բացառությամբ հաճախականային սահմանափակ ռեսուրս օգտագործելու դեպքերի) եւ ապահովում է փոխանցման ենթակառուցվածքի տեխնիկական շահագործումը» («Տեսալսողական մեդիայի մասին» օրենք, 3-րդ հոդված, 1-ին մաս, 5-րդ կետ):*

***Գծապատկեր 6.*** *Մալուխային ցանցերում տարածվող տեսալսողական ծրագրերի աշխարհագրությունը*




Ցանցային օպերատորի գործունեության լիցենզիան տրամադրվում է առանց մրցույթի՝ պարզեցված ընթացակարգով՝ այսպիսով նվազեցնելով ցանցային օպերատորների լիցենզավորման հետ կապված վարչարարությունը: Ցանցային օպերատորներն ազդանշանն օգտատերերին հասցնողներն են եւ տեսալսողական արտադրանքի բովանդակության համար պատասխանատվություն չեն կրում:

Հաշվետու տարվա ընթացքում Հանձնաժողովի կողմից տրամադրվել է ցանցային օպերատորի գործունեության 11 լիցենզիա: Ընդհանուր թվով՝ տեսալսողական ծրագրերի վերահաղորդում իրականացնող 65 ցանցային օպերատորից 10-ը գործել են համապետական, 10-ը՝ Երեւան քաղաքի եւ մեկ կամ մի քանի մարզերի, 6-ը՝ Երեւան քաղաքի, 3-ը՝ մեկից ավելի մարզերի եւ 36-ը՝ մեկ մարզի տարածքում (***Տես՝ Հավելված N 3***):

2022 թվականին Հանձնաժողովի կողմից տրամադրվել է ցանցային օպերատորի գործունեության 11 լիցենզիա:

***Գծապատկեր 7.*** *Վերահաղորդվող պեռւալուոդական ծրագրերի թեմատիկ ուղղվածությունը*




*Այլ[1]- պեռւալուոդական ծրագրերի այլ թեմատիկ ուղղվածություններ*

***Գծապատկեր 8.*** *Վերահաղորդվող պեռւալուոդական ծրագրերի հեռարձակման լեզուն*



***Գծապատկեր 9.*** *Վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի հեռարձակման լեզվի՝ 2019-2021 թվականների համեմատական պատկերը*




# 9 ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

## *9.1 Մրցույթներ*

Հանրային մուլտիպլեքսում տեսալսողական եւ լսողական ծրագրերի հեռարձակման լիցենզավորումն իրականացվում է մրցութային ընթացակարգով:

Հաշվետու տարում հայտարարվել եւ անցկացվել է 8 մրցույթ. հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման՝ հանրապետական սփռման 1 մրցույթ՝ 4[3] սլոթի քանակով, մայրաքաղաքային սփռման 2 մրցույթ եւ լսողական ծրագրի հաճախականության օգտագործման 5 մրցույթ:

Հայտարարված եւ անցկացված մրցույթների մեծ քանակը պայմանավորված էր հանրային մուլտիպլեքսում ազատ սլոթերի առաջացմամբ եւ մարզերում լսողական ծրագրերի հեռարձակման համար նոր հաճախականությունների առկայությամբ:

Ազատ սլոթեր առաջանալու պատճառը դատական ատյաններում Հանձնաժողովի որոշումների բողոքարկման արդյունքներն էին **(Տես Հավելված N 6)**, ինչպես

---

[3] ՀՀ վարչական դատարանի՝ 2022 թվականի օգոստոսի 30-ի որոշմամբ որպես հայցի ապահովման միջոց՝ արգելվել է Հանձնաժողովին հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման հանրապետական սփռման 1 սլոթի համալրմանն ուղղված մրցույթ իրականացնել՝ մինչեւ վարչական գործն ըստ էության լուծող դատական ակտի ուժի մեջ մտնելը:

Միաժամանակ, 2022 թվականի սեպտեմբերի 1-ին Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից կայացվել է «Պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտադրելու կամ որոշակի գործողությունների կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու մասին» որոշումը:

նաեւ Հանձնաժողովի կողմից մեկ տեսալսողական ծրագրի լիցենզիայի գործողության դադարեցումը (*Տես՝ Հավելված N 5*):

### *9.1.1 Տեսալսողական ծրագրերի հանրապետական սփռում*

Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման հանրապետական սփռման մրցույթին մասնակցելու հայտեր ներկայացրած 6 ընկերությունից՝ «ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲԸ, «Ա-ԹԻՎԻ» ՍՊԸ, «ՇԱՆԹ» ՍՊԸ, «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ, «ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲԸ, «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊԸ, 5-ը՝ 2021 թվականից հանրային մուլտիպլեքսում հեռարձակում իրականացնող ընկերություններ են, որոնցից 4-ը նոր մրցույթի արդյունքում հաղթող են ճանաչվել եւ ստացել նոր լիցենզիա:

### *9.1.2 Տեսալսողական ծրագրերի մայրաքաղաքային սփռում*

ՀՀ վարչական դատարանի վճռի հիման վրա (*Տես՝ Հավելված N 6*) հայտարարված հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մայրաքաղաքային սփռման մրցույթին մասնակցել է 2 ընկերություն: Հաղթող է ճանաչվել 2021 թվականից հեռարձակում իրականացնող «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերությունը եւ ստացել նոր լիցենզիա:

Հանրային մուլտիպլեքսում ազատ սլոթ[4] առաջանալու հիմքով հայտարարված մրցույթին մասնակցել է 4 ընկերություն: Հաղթող է ճանաչվել «:Բուն» գիտամշակութային հիմնադրամը:

### *9.1.3 Լսողական ծրագրերի մարզային սփռում*

Հաշվետու տարվա ընթացքում, նոր հաճախականությունների առկայությամբ պայմանավորված, հայտարարվել է լսողական ծրագրերի հաճախականության օգտագործման մարզային սփռման 6 մրցույթ. կայացել է 5-ը, իսկ 1 մրցույթ՝ Տավուշի մարզի լսողական ծրագրի հաճախականության օգտագործման, հայտարարվել է 2022 թվականի դեկտեմբերին:

Ընդ որում, միայն 2022 թվականին Վայոց ձորի, Սյունիքի, Լոռու եւ Արագածոտնի մարզերում մրցույթները կրկնակի են հայտարարվել՝ հայտեր չլինելու պատճառով:

Անցկացված մրցույթների արդյունքում 2022 թվականին լսողական մեդիածառայություն մատուցողների թիվն ավելացել է: Հատկանշական է, որ Վայոց ձորի,

---

[4] 2022 թվականին «ԱՐՄՆՅՈՒԶ» ՓԲ ընկերության նկատմամբ կիրառվել է լիցենզիայի գործողության կասեցում, ապա՝ դադարեցում, որի արդյունքում հանրային մուլտիպլեքսում առաջացել է ազատ սլոթ:

Սյունիքի եւ Արագածոտնի մարզերում առաջին անգամ հեռարձակվում են մարզային լողական ծրագրեր, իսկ Լոռու եւ Շիրակի մարզերում՝ 2 լողական ծրագիր:

Կարգավորող մարմինը գոհունակությամբ արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետության 7 մարզ ունի լողական ծրագրեր հեռարձակողներ, որոնք մարզերի բնակչության համար իրազեկման, մշակույթի եւ կրթության տարածման միջոց են: Կարեւոր ենք համարում հատկապես սահմանամերձ մարզերում լողական մեդիածառայություն մատուցողների գործունեությունը:

Արձանագրենք նաեւ, որ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն Արմավիրի եւ Կոտայքի մարզերում դեռեւս ազատ հաճախականություններ առկա չեն:

Հավելենք նաեւ, որ օրենքով սահմանված կարգավորումների համաձայն մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզավորման մրցույթ հայտարարվում է ազատ հաճախականությունների առկայության դեպքում: Սակայն մինչ օրս ազատ հաճախականություն չլինելու հետեւանքով լիցենզավորման մրցույթ չի հայտարարվում:

Ամփոփելով 2022 թվականին կայացած մրցույթների մասին տեղեկատվությունը՝ նշենք, որ մրցույթների ողջ գործընթացը կազմակերպվել է պատշաճ, անաչառ: Մրցույթին մասնակցող ընկերությունների համար ապահովվել են հավասար պայմաններ: Մրցույթի արդյունքներն եղել են հիմնավորված, որոնց հիմքում եղել են օբյեկտիվ, անկողմնակալ գնահատականներ:

### *9.2. 2022 թվականի լիցենզավորման, լիցենզիայի գործողության դադարեցման ցուցանիշներ*

Հանձնաժողովի կողմից անցկացված մրցույթների արդյունքում 2022 թվականին տրամադրվել է հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման հանրապետական սփռման 4, մայրաքաղաքային սփռման 2 եւ լողական ծրագրի հաճախականության օգտագործման մարզային սփռման 5 լիցենզիա:

*Գծապատկեր 10. 2022 թվականին տրամադրված լիցենզիաներ*




2022 թվականին Հանձնաժողով է ներկայացվել ցանցային օպերատորի գործունեության լիցենզիա ստանալու 11 դիմում, որոնք բավարարվել են: Արդյունքում, տրամադրվել է ցանցային օպերատորի գործունեության 4 լիցենզիա՝ Հայաստանի Հանրապետության, 1 լիցենզիա՝ Երեւան քաղաքի եւ 6 լիցենզիա՝ մեկ մարզի տարածքում սփռման համար:

Հաշվետու տարում, լիցենզավորման գործառույթի շրջանակում, Հանձնաժողովի կողմից վերաձեւակերպվել է 1 լիցենզիա՝ կազմակերպաիրավական ձեւի եւ գտնվելու վայրի փոփոխության հիմքով: Կասեցվել է 2 լիցենզիայի գործողությունը, որից 1-ի գործողության կասեցումն այնուհետեւ վերացվել է:

2022 թվականին դադարեցվել է հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման 7 լիցենզիայի գործողությունը. 1-ը՝ լիցենզիայի գործողության կասեցման ժամանակահատվածում խախտումը չվերացնելու հիմքով, 6-ը՝ ՀՀ վարչական դատարանի վճիռների համաձայն անցկացված նոր մրցույթների արդյունքում:

Հաշվետու ժամանակահատվածում դադարեցվել է նաեւ ցանցային օպերատորի գործունեության 11 լիցենզիա՝ ժամկետը լրանալու հիմքով կամ դիմումի համաձայն:

***Աղյուսակ 2.*** *Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման՝ 2022 թվականին դադարեցված լիցենզիաներ*

| Հ/Հ | ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿԱՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՍՓՌՄԱՆ ՏԱՐԱԾՔԸ | ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՀԻՄՔԸ |
|---|---|---|---|
| 1 | «ԱՐՄՆՅՈՒՔ» ՓԲԸ | ք. Երեւան | Լիցենզիայի գործողության կասեցման ժամանակահատվածում խախտումը չվերացնելը |
| 2 | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ | ք. Երեւան | ՀՀ վարչական դատարանի 25.08.2021 թ. վճռի համաձայն անցկացված նոր մրցույթը |
| 3 | «ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲԸ | Հայաստանի Հանրապետություն | ՀՀ վարչական դատարանի 02.04.2021 թ. վճիռի համաձայն անցկացված նոր մրցույթը |
| 4 | «ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲԸ | Հայաստանի Հանրապետություն | ՀՀ վարչական դատարանի 02.04.2021 թ. վճիռի համաձայն անցկացված նոր մրցույթը |
| 5 | «ՇԱՆԹ» ՍՊԸ | Հայաստանի Հանրապետություն | ՀՀ վարչական դատարանի 02.04.2021 թ. վճիռի համաձայն անցկացված նոր մրցույթը |
| 6 | «Ա-ԹԻՎԻ» ՍՊԸ | Հայաստանի Հանրապետություն | ՀՀ վարչական դատարանի 02.04.2021 թ. վճիռի համաձայն անցկացված նոր մրցույթը |
| 7 | «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ | Հայաստանի Հանրապետություն | ՀՀ վարչական դատարանի 02.04.2021 թ. վճիռի համաձայն անցկացված նոր մրցույթը |

***Աղյուսակ 3***. *Ցանցային օպերատորի գործունեության՝ 2022 թվականին դադարեցված լիցենզիաներ*

| Հ/Հ | ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿԱՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՍՓՌՄԱՆ ՏԱՐԱԾՔԸ | ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՀԻՄՔԸ |
|---|---|---|---|
| 1 | «ԹԻՎԻ ԿՈՆՏԵՆՏ»ՍՊԸ | ք. Երեւան, Կոտայքի եւ Վայոց ձորի մարզեր | դիմումի համաձայն |
| 2 | «ԴԱՅԱՆԱՆԵՏ» ՍՊԸ | ՀՀ Շիրակի մարզ | ժամկետը լրանալու հիմքով |
| 3 | «ԱՐՏ-ԹԻՎԻ-ՆԵԹ» ՍՊԸ | ՀՀ Արարատիմարզ | ժամկետը լրանալու հիմքով |
| 4 | «ԹԻՎԻՆԵՏ» ՍՊԸ | ք. Երեւան | ժամկետը լրանալու հիմքով |
| 5 | «ԷՅ-ԱՓ» ՓԲԸ | ք. Երեւան | ժամկետը լրանալու հիմքով |
| 6 | «ԹԻՎԻ ՍԹԵՅՇՆ» ՍՊԸ | ՀՀ Լոռու, Տավուշի եւ Վայոց ձորի մարզեր | դիմումի համաձայն |
| 7 | «ԱՐՄՔՈՄ» ՍՊԸ | ՀՀ Կոտայքի մարզ | դիմումի համաձայն |
| 8 | «ԱՅ ԷՍ ՓԻ ՍԸՓՈՐԹ» ՍՊԸ | ՀՀ Արարատի մարզ | դիմումի համաձայն |
| 9 | ՄԻՔԱՅԵԼ ՇՈԿԱՐՅԱՆ ԱՁ | Հայաստանի Հանրապետություն | դիմումի համաձայն |
| 10 | «ՅՈՒՔՈՄ» ՓԲԸ | Հայաստանի Հանրապետություն | ժամկետը լրանալու հիմքով |
| 11 | «ՄԱՐՏՈՒՆԻ ՏՎ» ՍՊԸ | ՀՀ Գեղարքունիքի մարզ | ժամկետը լրանալու հիմքով |

# ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԴԻՍՏՐԻԲՅՈՒՏՈՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

10

## *10.1 Տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների ծանուցումների հաստատման գործընթաց*

***«Տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորը Հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա օպերատորին տարածման նպատակով տեսալսողական ծրագրեր տրամադրող ֆիզիկական կամ իրավաբանական անձն է» («Տեսալսողական մեդիայի մասին» օրենք, 3-րդ հոդված, 1-ին մաս, 10-րդ կետ):***

2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի գործունեություն է իրականացնում 8 ընկերություն: Այս ընկերությունները գործում են Հանձնաժողով ծանուցում ներկայացնելուց հետո:

Հաշվետու տարվա ընթացքում, Օրենքով Հանձնաժողովին վերապահված տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների ծանուցումների հաստատման գործառույթի շրջանակում, ներկայացված ծանուցումների հիման վրա ուսումնասիրվել են տեսալսողական ծրագրերի իրավատերերի հետ կնքված 38 պայմանագրեր, համաձայնագրեր եւ այլ փաստաթղթեր: Արդյունքում հաստատվել է 79 տեսալսողական ծրագրի վերաբերյալ 16 ծանուցում:

## *10.2 Ոչ գծային տեսալսողական տեղեկատվության հեռարձակման գործունեություն իրականացնելու թույլտվությունների տրամադրման գործընթաց*

***«Ոչ գծային տեսալսողական տեղեկատվությունը Հեռարձակողի կամ օպերատորի կողմից անհատ սպառողի պահանջով նրա ընտրած պահին դիտելու եւ (կամ) լսելու նպատակով տրամադրվող տեսալսողական նյութն է՝ ըստ տեսացանկի (կատալոգի)» («Տեսալսողական մեդիայի մասին» օրենք, 3-րդ հոդված, 1-ին մաս, 17-րդ կետ):***

Ժամանակակից տեխնոլոգիաների զարգացումը բարձրացնում է տեսալսողական ծառայությունների որակը, դարձնում ավելի անհատականացված, հասանելի եւ կառավարելի սպառողի կողմից: Այժմ հեռուստադիտողը նոր հնարավորություններ է ստանում տարատեսակ մեդիա բովանդակության որոնման, պահպանման եւ օգտագործման համար:

Օրենքով՝ Հանձնաժողովին վերապահված ոչ գծային տեսալսողական տեղեկատվության հեռարձակման գործունեություն իրականացնելու թույլտվությունների տրամադրման գործառույթը լիարժեք սկսեց իրականացվել 2021 թվականի հոկտեմբերից, երբ Հանձնաժողովի որոշմամբ սահմանվեց ոչ գծային հեռարձակողների կողմից առանց լիցենզավորման տեսալսողական տեղեկատվության հեռարձակման գործունեություն

իրականացնելու թույլտվություն ստանալու ընթացակարգը: Վերջինս թույլ տվեց կարգավորող մարմնին պաշտպանել ոչ գծային հեղինակային եւ հարակից իրավունքի սուբյեկտ հանդիսացող իրավատերերի իրավունքները:

2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ոչ գծային տեսալսողական տեղեկատվության հեռարձակման գործունեություն իրականացնելու թույլտվություն է ստացել 6 ոչ գծային հեռարձակող:

Հաշվետու ժամանակահատվածում նշված գործառույթի շրջանակում Հանձնաժողովի կողմից տրամադրվել է 2 թույլտվություն:

*Աղյուսակ 4. Առանց լիցենզավորման ոչ գծային տեսալսողական տեղեկատվության հեռարձակման գործունեություն իրականացնելու՝ 2022 թվականին տրամադրված թույլտվություններ*

| Հ/Հ | ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿԱՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՍՓՌՄԱՆ ՏԱՐԱԾՔԸ |
|---|---|---|
| 1 | «ՀԻԲՐԻԴ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ» ՍՊԸ | Հայաստանի Հանրապետություն |
| 2 | «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ | Հայաստանի Հանրապետություն |

# 11 ՀԵՌԱՐՁԱԿՈՂՆԵՐԻ ԵՎ ՑԱՆՑԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

## *11.1 Ընդհանուր տեղեկություններ մշտադիտարկման մասին*

***«Մշտադիտարկումը կարգավորող պետական մարմնի կողմից Հեռարձակողների եւ օպերատորների գործունեության՝ տեսալսողական մեդիայի մասին օրենսդրության պահանջներին համապատասխանությունը գնահատելու նպատակով իրականացվող դիտարկումն է» («Տեսալսողական մեդիայի մասին» օրենք, 3-րդ հոդված, 1-ին մաս, 26-րդ կետ):***

2022 թվականի ընթացքում Հանձնաժողովն իր վերահսկողական գործունեության շրջանակներում ընտրանքային սկզբունքով իրականացրել է Հեռարձակողների կողմից հեռարձակվող տեսալսողական տեղեկատվության մշտադիտարկում Օրենքով սահմանված կարգով՝ յուրաքանչյուր Հեռարձակողի համար ամսական առնվազն հինգ օր տեւողությամբ:

Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվել է ուղղակի դիտարկման, իսկ ցանցային օպերատորների դեպքում՝ նաեւ տեղում դիտարկում իրականացնելու միջոցով: Ե՛վ ուղղակի, եւ՛ տեղում դիտարկումները Հանձնաժողովի կողմից իրականացվել են պլանավորված՝ ըստ Հեռարձակողների եւ ցանցային օպերատորների համար կազմված տարեկան դիտարկումների ժամանակացույցի, ինչպես նաեւ ըստ անհրաժեշտության, երբ որեւէ Հեռարձակողի կամ ցանցային օպերատորի գործունեության վերաբերյալ դիմում-բողոք է ստացվել:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված իրավախախտումների հատկանիշների վերաբերյալ կազմվել է 26 արձանագրություն:

Հանձնաժողովը 2022 թվականի ընթացքում կազմել է նաեւ աննախադեպ թվով գրություններ, որոնք միտված են եղել կանխելու խախտումը մինչեւ այն կատարելը, այսինքն՝ փորձ է կատարվել նախազգուշացնել, կանխել, ոչ թե՝ պատժել:

Հանձնաժողովի վերահսկողական գործունեության շրջանակներում 2022 թվականին Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվել է 16 գործուղում, որից 7-ը՝ Երեւան քաղաքում, իսկ 9-ը՝ մարզերում, համապատասխանաբար՝ Արմավիր՝ 1, Կոտայք՝ 3, Շիրակ՝ 1, Լոռի՝ 1, Տավուշ՝ 1, Վայոց ձոր՝ 1, Գեղարքունիք՝ 1: Գործուղումների ընթացքում տեղում դիտարկման է ենթարկվել 27 ցանցային օպերատոր:

Օրենքով սահմանված կարգով Հանրային հեռարձակողի կողմից եռամսյա կտրվածքով Հանձնաժողով է ներկայացվել տեղեկատվական, կրթական, մշակութային եւ ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման վիճակի վերաբերյալ հաշվետվություններ, որոնց ուսումնասիրության արդյունքում կարող ենք փաստել, որ հաշվետու ժամանակահատվածում Հանրային հեռարձակողն ապահովել է հեռարձակվող հաղորդումների բազմազանությունը:

Հանձնաժողովը, կարեւորելով Հեռարձակողների ծրագրերում հանրօգուտ՝ մանկական, կրթական, մշակութային եւ մարզական թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումների առկայությունը, հետեւողական է եղել Օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասով ամրագրված պահանջի պահպանման կատարմանը: Այն է՝ «Լիցենզիա ստացած Հեռարձակողի ծրագրում մանկական, կրթական, մշակութային եւ մարզական թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումները պետք է կազմեն շաբաթական եթերաժամի առնվազն 20 տոկոսը»:

## 12 ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԹԵՄԱՏԻԿ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԵԹԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

***«Թեմատիկ ուղղվածությունը տեսալսողական հաղորդումների ուղղվածությունն է ըստ բովանդակային առանձնահատկությունների» («Տեսալսողական մեդիայի մասին» օրենք, 3-րդ հոդված, 1-ին մաս, 7-րդ կետ):***

Հանձնաժողովն երաշխավորելով տեսալսողական մեդիածառայություններ մատուցողների խմբագրական անկախությունը՝ միաժամանակ կարեւորում է վերջիններիս կողմից հեռարձակվող տեսալսողական ծրագրերի եթերի կառուցվածքը, տեսալսողական հաղորդումների թեմատիկ ուղղվածությունը:

Ստորեւ փաստացի տվյալների հիման վրա ներկայացնում ենք Հանձնաժողովի կողմից կատարված վերլուծության արդյունքները:

***Գծապատկեր 11.*** *Հանրապետական եւ մայրաքաղաքային սփռման պեռալողական ծրագրերի եթերի կառուցվածքը*




***Այլ[1]- թեմատիկ ուղղվածության այլ հաղորդումներ***

***Գծապատկեր 12.*** *Հանրապետական եւ մայրաքաղաքային սփռման պեռալողական ծրագրերի՝ 2022 թվականի եթերում հայերեն հաղորդումների կշիռը*



***Գծապատկեր 13.*** *Հանրապետական եւ մայրաքաղաքային սփռման պեռաչնտրողական ծրագրերի հայերեն հեռարձակվող հաղորդումների՝ 2020-2022 թվականներին համեմատական պատկերը*




***Գծապատկեր 14.*** *Հանրապետական եւ մայրաքաղաքային սփռման պեռաչնտրողական ծրագրերի սեփական հաղորդումների 2021-2022 թվականների համեմատական պատկերը*



***Գծապատկեր 15.*** *Մարզային սփռման պլանավորողական ծրագրերի եթերի կառուցվածք*




***Այլ[1]- թեմատիկ ուղղվածության այլ հաղորդումներ***

***Գծապատկեր 16.*** *Մարզային սփռման պլանավորողական ծրագրերի եթերում հայերեն հաղորդումների՝ 2022 թվականի պատկերը*



***Գծապատկեր 17.*** *Լսողական մեդիածառայություն մատուցողների ծրագրերի եթերի կառուցվածքը*




## ԷԹԻԿԱՅԻ ՆՈՐՄԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

13

***«Էթիկայի կանոնագիրը Հեռարձակողի կողմից միջազգային չափանիշների համաձայն ինքնուրույն կազմված փաստաթուղթն է սեփական էթիկական նորմերի վերաբերյալ» («Տեսալսողական մեդիայի մասին» օրենք, 3-րդ հոդված, 1-ին մաս, 28-րդ կետ):***

Օրենքի համաձայն լիցենզավորված բոլոր Հեռարձակողները պարտավոր են ունենալ էթիկայի կանոնագիր, որն ի թիվս այլնի լիցենզիայի պայման է: Հեռարձակողները պարտավոր են նաեւ սահմանել իրենց կողմից ընդունված էթիկայի կանոնագրի դրույթների ապահովման ինքնակարգավորման միջոցները, ինչը ենթադրում է, որ Հեռարձակողը պետք է մեխանիզմներ սահմանի էթիկայի կանոնների կիրառումն ապահովելու համար:

Լիցենզավորված Հեռարձակողներն ընտրել են էթիկայի կանոնների պահպանման հնարավոր տարբերակներից երկուսը. մեծամասնությունը ստորագրել է Հայաստանի զանգվածային լրատվության միջոցների էթիկայի դիտորդ մարմնի՝ Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիրը, իսկ մի քանի Հեռարձակողներ ընտրել են ներքին ինքնակարգավորման տարբերակը: Վերջինս ժողովրդավարության հաստատման ցուցիչներից մեկն է համարվում, քանի որ՝

- պաշտպանում է խմբագրական անկախությունը,

- նվազեցնում է պետական ինստիտուտների (այդ թվում՝ կարգավորող մարմնի) միջամտությունը խմբագրական քաղաքականությանը,

- նպաստում է Հեռարձակողի հանդեպ վստահության բարձրացմանը,

- ապահովում է Հեռարձակողների հաղորդակցությունը հանրության հետ՝ երկխոսության նոր հարթակ ստեղծելով նրանց միջեւ:

Կատարված քայլերը դրական գնահատելով հանդերձ՝ Հանձնաժողովի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հեռարձակողների ինքնակարգավորման մեխանիզմի կիրառումը դեռեւս չի կայացել: Դիցուք, հեռարձակողների կողմից էթիկայի կանոնագրի խախտումներ թույլ տալու դեպքում հասարակությունը հակված չէ դիմելու ինքնակարգավորման մարմիններին: Փոխարենը բողոքը կամ դժգոհությունը հիմնականում արտահայտում են մամուլում կամ սոցիալական ցանցերում, երբեմն՝ դիմում դատարան, Հանձնաժողով, սակայն ո՛չ ինքնակարգավորման մարմնին:

Վերոնշյալը ցույց է տալիս, որ քաղաքական ուժերը, պետական հաստատությունները, հանրությունն անտարբեր են մասնագիտական էթիկայի խախտումների հանդեպ: Այդուհանդերձ, մեխանիզմի թերություններից է էթիկայի նորմերի խախտման վերաբերյալ բողոքների երկար քննությունն ինչպես Հայաստանի զանգվածային լրատվության միջոցների էթիկայի դիտորդ մարմնի, այնպես էլ ներքին պատասխանատու մարմնի (ստորաբաժանման) կամ անձի (օմբուդսման) կողմից:

Դիտորդ մարմնի կանոնագրով, օրինակ, սահմանված է բողոքների քննության 3-ամսյա ժամկետ, սակայն անգամ այդ ժամկետն առանձին դեպքերում խախտվում է: Այսպես՝ «ՖՐԻ ՆՅՈՒԶ» ՍՊԸ-ի կողմից թույլ տրված էթիկայի հնարավոր խախտման վերաբերյալ Հանձնաժողովը Դիտորդ մարմին գրությամբ դիմել է 2022 թվականի հունիսի 22-ին, իսկ պատասխանը ստացվել է 2022 թվականի նոյեմբերի 16-ին:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊԸ-ի կողմից հեռարձակվող «Հայկական երկրորդ հեռուստաալիք» ծրագրի վերաբերյալ գրությունը Հանձնաժողովի կողմից ուղարկվել է դեռ 2022 թվականի սեպտեմբերի 20–ին, սակայն 2023 թվականի մարտի 20–ի դրությամբ պատասխանը դեռ չի ստացվել:

- Էթիկայի նորմերի խախտումներն ու հետեւանքներն անհամաչափ են՝ խախտում կատարած Հեռարձակողները պատրաստ են իրենց եթերում հրապարակել համապատասխան եզրակացությունը եւ շարունակել խախտել էթիկայի նորմերը,

- էթիկայի սեփական կանոնագրի դեպքում հաճախ դրսեւորվում է կողմնակալ մոտեցում:

Հանձնաժողովը կարեւորում է այս ինստիտուտի կայացումը եւ դրա գործառույթների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացումը, որպեսզի հասարակությունը հակված լինի Հեռարձակողների կողմից էթիկայի կանոնների խախտումներ թույլ տալու

դեպքում դիմելու ինքնակարգավորման մարմնին՝ ապահովելով այս մարմնի հիմնական գործառույթների իրականացումը, ասել է թե՝ էթիկայի խախտումների վերաբերյալ բողոքների քննությունն ու որոշումների կայացումը, դիմումատուի եւ լրատվամիջոցների միջեւ որպես միջնորդ հանդես գալը, էթիկայի կանոնները խախտած զանգվածային լրատվության միջոցների մատնանշումը, ընդունված բոլոր որոշումների թափանցիկության եւ հրապարակայնության ապահովումը, մամուլի ազատության պաշտպանությունը:

Այնուամենայնիվ, Հանձնաժողովը, նպաստելով երկրում հեռարձակողների ինքնակարգավորման մոդելի ամրապնդմանն ու կայացմանը, 2022 թվականին 13 անգամ դիմել է էթիկայի ինքնակարգավորման մարմիններ. 11-ը՝ Դիտորդ մարմնին, 2-ը՝ Հեռարձակողի կողմից ստեղծված ինքնակարգավորման մարմնին:

Մասնավորապես, «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊԸ-ի կողմից հեռարձակվող «Հայկական երկրորդ հեռուստաալիք» ծրագրի վերաբերյալ Հանձնաժողովը Դիտորդ մարմնին դիմել է 5 անգամ՝ 2 դեպքով համակցված գրությամբ՝ «Պրոֆ Ֆակտ», «Հայելի ակումբ» եւ «Հինգշաբթին Էդիկ Անդրեասյանի հետ» հաղորդումների, եւ 3 դեպքով՝ առանձին գրությամբ՝ «Հայելի ակումբ» հաղորդման ընթացքում հնչած արտահայտությունների մասով:

«ԱՐՄՆՅՈՒԶ» ՓԲԸ-ի կողմից հեռարձակվող «ԱՐՄՆՅՈՒԶ» ծրագրի վերաբերյալ Հանձնաժողովը Դիտորդ մարմնին դիմել է 4 անգամ՝ 1 անգամ «Ճեպազրույց» եւ 3 դեպքով «Հայելի ակումբ» հաղորդումների ընթացքում տարբեր մամուլի ասուլիսներում եւ քննարկումներում տեղ գտած արտահայտությունների մասով:

«ՖՐԻ ՆՅՈՒԶ» ՍՊԸ-ի կողմից հեռարձակվող «ՖՐԻ ՆՅՈՒԶ» ծրագրի վերաբերյալ Դիտորդ մարմնին ուղղված գրությունները եղել են 2-ը, որոնք վերաբերել են «Ազատ շփում Գնել Սարգսյանի հետ» հաղորդման ընթացքում հնչեցված արտահայտություններին:

«ՇԱՐԿ» ՍՊԸ-ի կողմից հեռարձակվող «5-ՐԴ ԱԼԻՔ» ծրագրի վերաբերյալ Հանձնաժողովը դիմել է «ՇԱՐԿ» ՍՊԸ-ի էթիկայի հանձնաժողով 2 դեպքով՝ «Հայլուր» եւ «Օրագիր» հաղորդումներում տեղ գտած արտահայտությունների մասով:

«ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲԸ-ի կողմից հեռարձակվող «ԵՐԿԻՐ ՄԵԴԻԱ» ծրագրի մասով դիրքորոշում ստանալու նպատակով Հանձնաժողովի կողմից Դիտորդ մարմնին ուղղվել է մեկ գրություն, որը վերաբերել է «Երկիրն այսօր» լրատվական հաղորդումների ժամանակ հնչեցված առանձին արտահայտություններին:

# 14 ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

## *14.1 Հարուցված վարույթներ*

**Գծապատկեր 18.** *Կարգավորող մարմնի վերահսկողության ոլորտում գործող և վարչարարություն իրականացված ընկերություններ*




Հանձնաժողովը, իրականացնելով Օրենքով իրեն վերապահված վերահսկողական գործառույթները, 2022 թվականի ընթացքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված վարչարարության իրականացման արդյունքում հարուցել է 44 վարչական վարույթ. 29-ը՝ սեփական նախաձեռնությամբ, որոնք արձանագրվել են մշտադիտարկման արդյունքում, 15-ը՝ վարչական բողոքների համաձայն:

**Գծապատկեր 19.** *Հարուցված վարչական վարույթների 2011-2022 թվականների համեմատական պատկերը*



2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա էին եւս 4 ընթացիկ վարույթ (3-ը՝ սեփական նախաձեռնությամբ, 1-ը՝ վարչական բողոքի համաձայն):

Կարգավորող պետական մարմինը տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերելու արդյունքում կիրառել է հետեւյալ **վարչական տույժերը**.

- 27 վարչական վարույթի արդյունքում կիրառվել է **տուգանք**,
- 4 վարչական վարույթի արդյունքում կիրառվել է **գրավոր նախազգուշացում**,
- 2 վարչական վարույթի արդյունքում կիրառվել է **լիցենզիայի գործողության կասեցում** (կասեցումից հետո մեկի հանդեպ կիրառվել է վարչական տույժ՝ **լիցենզիայի դադարեցում**),
- 14 վարչական վարույթի արդյունքում վարչական վարույթը կարճվել է[5]:

[5] Ընդգծենք, որ «Շարկ» ՍՊԸ-ի նկատմամբ Հանձնաժողովի 30. 06. 2022 թ. թիվ 93-Ա որոշմամբ կիրառվել է եւ՛ գրավոր նախազգուշացում, եւ՛ տուգանք:
«Հիբրիդ Սոլյուշընս» ՍՊԸ–ի նկատմամբ հարուցված վարչական վարույթը Հանձնաժողովի 16. 03. 2022 թ. թիվ 37-Ա որոշմամբ կասեցվել է (մինչեւ դատական ակտ կայացնելը):

***Գծապատկեր 20.*** *Վարչական վարույթների 2019-2022 թվականների համեմատական պատկերը*




### *14.2 Վարչական վարույթների հարուցման համար հիմք հանդիսացած իրավախախտումներ (Մանրամասները՝ Հավելված N 5-ում)՝*

*ա) Օրենսդրությամբ լեսապլսողական մեդիայի ոլորտում հեղինակային կամ հարակից իրավունքների խախտում:*

*բ) Օրենսդրությամբ անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող լեսապլսողական հաղորդումների, ինչպես նաև սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերի հեռարձակում:*

*գ) Տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից գովազդը կարգավորող օրենսդրության դրույթների խախտում:*

*դ) Կարգավորող պետական մարմին նախորդող տարվա հասույթի գոյացման բացվածքի եւ չափի վերաբերյալ տեղեկության չներկայացում:*

*ե) Լիցենզիա ստացած Հեռարձակողի կողմից առանց որեւէ հիմնավոր պատճառի 24 ժամ շարունակ տեսալսողական հաղորդումների չհեռարձակում:*

*զ) Ծխելու տեսարաններ պարունակող տեսալսողական հաղորդման մեկնարկին տեսանելի չափով, հինգ վայրկյան տեւողությամբ «Ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառման բացակայություն:*

*է) Հեռարձակողների անվանումները էկրանային ցուցադրման ժամանակ միայն օտար լեզուներով՝ առանց հայերեն անընդհատ տառադարձության ցուցադրում:*

*ը) Օտար լեզուներով հեռարձակվող տեսալսողական հաղորդումների, ֆիլմերի հեռարձակում՝ առանց հայերեն ընկալման որեւէ միջոցով (կրկնօրինակմամբ, հնչյունավորմամբ եւ (կամ) ենթագրի) ուղեկցման:*

*թ) Հեռարձակողի լրատվական հաղորդումներում նույն թեմայի վերաբերյալ հաղորդման եթերաժամի 25 տոկոսի գերազանցում:*

*ժ) Հեռարձակողի նախանշած նպատակների իրագործման հիմնական ուղղությունների եւ միջոցառումների ընդհանրական նկարագրին անհամապատասխան գործունեություն:*

*ի) Տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի վարման սահմանված կարգի խախտում:*

*լ) Առանց Օրենքով սահմանված ծանուցման գործունեության իրականացում:*

### *14.3 Դատական բողոքարկումներ*

Հաշվետու տարում գրանցվել է Հանձնաժողովի կողմից իրականացված վարույթների, ինչպես նաեւ ընդունված որոշումների դատական կարգով բողոքարկման մեծ աճ. դեռեւս 2021 թվականից դատարանների վարույթում էր գտնվում 6 վարչական գործ, իսկ 2022 թվականին Հանձնաժողովը եւս 12 հայցով հանդես է եկել որպես պատասխանող:

**Գծապատկեր 21.** *Հանձնաժողովի որոշումների դատական կարգով բողոքարկման 2011- 2022 թթ. տվյալները*




Հեռարձակողները Դատարան են դիմել հետևյալ պահանջով՝

1) ***Միջամտող վարչական ակտը վերացնելու,***
2) ***Բարենպաստ վարչական ակտ կայացնելու:***

Հանձնաժողովը 2021 թվականի Տարեկան հաղորդման մեջ[6] ներկայացրել էր այն պատճառները, որոնց արդյունքում կարգավորող մարմնի կողմից ընդունված որոշումների դեմ ներկայացված հայցադիմումների քանակն ավելացել էր: Հավելենք միայն, որ ազատորեն օգտվելով Հանձնաժողովի որոշումները բողոքարկելու իրենց իրավունքից՝ որոշ Հեռարձակողներ դատական կարգով բողոքարկում են կարգավորող մարմնի կողմից կայացված ցանկացած որոշում:

Այսպես՝ 2021 թվականին միայն մեկ ընկերություն Հանձնաժողովի ընդունած որոշումների դեմ ներկայացրել էր 5 հայցադիմում, իսկ 2022 թվականին՝ ևս 7-ը: Հաշվի առնելով այդ հայցադիմումների մի մասի իրավական առումով անբովանդակ լինելը՝ Հանձնաժողովի մոտ հիմնավոր կասկածներ են առաջանում, որ այդպիսի «քաղաքականությունը» նպատակ ունի անտեղի ծանրաբեռնել կարգավորող մարմնի համապատասխան ստորաբաժանումների գործունեությունը, նվազեցնել աշխատանքների արդյունավետությունը, սասանել վստահությունը Հանձնաժողովի

[6] Տես՝ http://tvradio.am/wp-content/uploads/2022/03/2021-report.pdf, Տարեկան հաղորդում 2021, էջ 52-56, 75

2022 թվականին ՀՀ դատարանների վարույթում են գտնվում հետևյալ Հեռարձակողների հետ կապված վարչական գործեր՝

- **«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊԸ**
- **«ՀՈՌՒՓ ՄԵԴԻԱ» ՍՊԸ**
- **«ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲԸ**
- **«ՇԱՐԿ» ՍՊԸ**
- **«ԱՄԵԴԻԱ» ՍՊԸ**

Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների, դատական բողոքարկումների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է **Հավելված N 6-ում**:

## ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԳԾՈՎ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԿԱՏԱՐՎԱԾ ՓԱՍՏԱՑԻ ՄՈՒՏՔԵՐ

15

Հանձնաժողովի կարգավորման ներքո գործող ընկերությունները 2022 թվականին պետական տուրքի գծով ՀՀ պետական բյուջե մուտքագրված 43 102 559 ՀՀ դրամ գումարն ապահովել են տեսալսողական եւ լսողական ծրագրերի հեռարձակման, ցանցային օպերատորների գործունեության համար տարեկան պետական տուրքերի, հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման, լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզավորման մրցույթների մասնակցության, ինչպես նաեւ սահմանված ժամկետում չվճարված տարեկան պետական տուրքի գումարի նկատմամբ հաշվարկված տույժերի համար գանձված գումարների հաշվին:

Համեմատության կարգով նշենք, որ Հանձնաժողովի կողմից գանձվող պետական տուրքը 2020 թվականին կազմել է 38 532 690 ՀՀ դրամ, 2021 թվականին՝ 33 946 820 ՀՀ դրամ:

2022 թվականի պետական տուրքի մուտքերի բարձր ցուցանիշը նախորդ տարիներին գանձված փաստացի մուտքերի նկատմամբ պայմանավորված է կարգավորող մարմնի կողմից 2022 թվականին հայտարարված հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման, ինչպես նաեւ լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզավորման մի շարք մրցույթների անցկացմամբ:

# 16 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2022 թվականին Հանձնաժողովն երկկողմանի եւ բազմակողմանի ձեւաչափերով շարունակել է համագործակցել մի շարք երկրների մեդիակարգավորող մարմինների, միջազգային կազմակերպությունների ու հարթակների հետ: Տարվա ընթացքում ուսումնասիրվել է գործընկեր կազմակերպությունների մոտ գործող կարգավորման մոդելները եւ առաջատար փորձը, ոլորտի օրենսդրական փոփոխությունները, միջազգային շուկայում իրականացվող հետազոտությունները, հաշվետվությունների եղանակները եւ այլն:

Հանձնաժողովը հանդիսանում է Կարգավորող մարմինների եվրոպական պլատֆորմի (EPRA), Սեւծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության անդամ երկրների կարգավորող մարմինների ֆորումի (BRAF), Կենտրոնական Եվրոպայի կարգավորող ֆորումի (CERF) եւ Միջերկրածովյան կարգավորող մարմինների հարթակի (MNRA) անդամ:

Դեռեւս 2021 թվականին սկսված բանակցությունները, որոնց նպատակն էր դառնալ Մեդիա կարգավորող մարմինների ֆրանկոֆոն հարթակի (REFRAM) լիիրավ անդամ, հաջողությամբ ավարտվեցին: 2022 թվականի հոկտեմբերի 7-ին Փարիզում կայացած Ֆրանկոֆոն երկրների մեդիա կարգավորողների ֆորումի (REFRAM) 7-րդ կոնֆերանսում Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովն ընտրվեց REFRAM-ի լիիրավ անդամ: ՀՌՀ-ի՝ Ֆորում ընտանիքին միանալու որոշումն ընդունվել է միաձայն՝ 30 անդամ պետությունների կարգավորող մարմինների բոլոր ղեկավարների կողմից:

Հաշվետու տարվա ընթացքում Հանձնաժողովի ներկայացուցիչները մասնակցել են EPRA-ի գարնանային եւ աշնանային նստաշրջաններին՝ Անտվերպեն (Բելգիա) եւ Անթալիա (Թուրքիա) քաղաքներում, որոնց ժամանակ քննարկվել են «Անչափահասները եւ գովազդը», «Մեդիա կարգավորողները թվային միջավայրում» եւ «Ապատեղեկատվություն, բազմակարծություն եւ վստահություն» թեմաները:

Նստաշրջանների ընթացքում կայացել են երկկողմանի հանդիպումներ եւ քննարկումներ մի շարք երկրների կարգավորող մարմինների ներկայացուցիչների հետ:

Կարեւորելով միջազգային գործընկերների հետ աշխատանքը եւ ոլորտում ձեռք բերված փորձի փոխանակումը՝ հաշվետու տարվա ընթացքում Հանձնաժողովը ստորագրել է եւս երկու համաձայնագիր:

2022 թվականի մայիսին, Վրաստանի ազգային հաղորդակցությունների հանձնաժողովի (ComCom) հրավերով, ՀՌՀ նախագահի գլխավորած պատվիրակությունը մեկնել է Թբիլիսի: Այցի ընթացքում տեղի են ունեցել հանդիպումներ Վրաստանի

ազգային հաղորդակցությունների հանձնաժողովի, Վրաստանի հանրային հեռուստաընկերության ղեկավարների հետ, քննարկվել են բազմաթիվ խնդիրներ:

Թբիլիսի կատարած այցի ավարտին Վրաստանի ազգային հաղորդակցությունների հանձնաժողովը (ComCom) եւ Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովը ստորագրել են համագործակցության մասին Հուշագիր, որը կնպաստի տեսալսողական մեդիայի կարգավորման ոլորտում երկու երկրների համագործակցության զարգացմանը, ինչպես նաեւ ազգային կառույցների՝ ոլորտում ձեռք բերված փորձի փախանակմանը: Ստորագրված հուշագրի շրջանակներում արդեն սեպտեմբերին կայացել է հեռավար հանդիպում երկու կառույցների մասնագետների միջեւ, որի ընթացում քննարկվել են մեդիա դաշտի կարգավորման վերաբերյալ երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

2022 թվականի հունիսին Լիտվայի Հանրապետության հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի (RTCL) հրավերով ՀՌՀ նախագահի գլխավորած պատվիրակությունը մեկնել է Վիլնյուս, ունեցել մի շարք աշխատանքային հանդիպումներ, այդ թվում՝ Լիտվայի հանրային հեռուստատեսության ղեկավար կազմի հետ: Դեռեւս 2020 թվականին Հանձնաժողովը նախաձեռնել էր համագործակցության հուշագրի տեքստի մշակման գործընթացը: Աշխատանքներն ավարտվել էին 2021 թվականին, սակայն մի շարք հանգամանքներից ելնելով՝ հուշագրի ստորագրումը հետաձգվում էր:

2022 թվականին Վիլնյուս կատարած այցի շրջանակներում Լիտվայի Հանրապետության հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովը եւ Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովը ստորագրեցին Համագործակցության համաձայնագիր, որի շրջանակներում կողմերը կիրականացնեն իրավական կարգավորող փաստաթղթերի, չափորոշիչների եւ մշակված մեթոդների ու մեթոդաբանությանը վերաբերող տեղեկատվության փոխանակում, կխորհրդակցեն ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող խնդիրների շուրջ, տեսալսողական գործունեության ոլորտում կիրականացնեն փորձի փոխանակում, ինչպես նաեւ կմասնակցեն կողմերից որեւէ մեկի նախաձեռնությամբ կազմակերպված կոնֆերանսներին, սեմինարներին եւ միջազգային այլ միջոցառումներին:

2022 թվականի նոյեմբերին Հանձնաժողովի իրավաբանական վարչության պետը գործուղվել է Լիտվա՝ Վիլնյուս քաղաք: Մասնակցել է Եվրոպայի Միության կողմից կազմակերպված «Հաճախականությունների օգտագործման հարցերով փորձագետների» 14-րդ հանդիպմանը  (Spectrum Expert Working Group, SEWG), ինչպես նաեւ քննարկումներ ունեցել Լիտվայի կարգավորող մարմնի իրավաբանական դեպարտամենտում:

2022 թվականի դեկտեմբերին, Ռուսաստանի Դաշնության մի շարք կազմակերպությունների հրավերով, Հանձնաժողովի նախագահի գլխավորած պատվիրակությունն աշխատանքային այցով գտնվել է Մոսկվայում: ՌԴ մայրաքաղաքում

հանդիպումներ են կայացել Ռուսաստանի Դաշնության թվային զարգացման, կապի եւ զանգվածային հաղորդակցության նախարարության եւ Ռուսաստանի Դաշնության տեղեկատվական տեխնոլոգիաների, կապի եւ զանգվածային հաղորդակցության բնագավառի վերահսկողության դաշնային ծառայության (Роскомнадзор) ղեկավար կազմի, ՌԴ ժուռնալիստների միության նախագահի, Համառուսաստանյան պետական հեռուստառադիոընկերության (ВГТРК) միջազգային համագործակցության հարցերով փոխտնօրենի եւ մեդիա ոլորտի այլ ներկայացուցիչների հետ: Քննարկվել են բազմաթիվ հարցեր եւ խնդիրներ, մասնավորապես՝ Հանձնաժողովի եւ Ռոսկոմնադզորի միջեւ կնքված համագործակցության մասին Հուշագրի դրույթների պրակտիկ իրագործման հետ կապված:

Հանդիպումների ընթացքում Հանձնաժողովի նախագահը գերատեսչությունների ղեկավարներին ներկայացրել է Հանրային մուլտիպլեքսում հեռարձակվող ՌԴ հեռուստածրագրերի մշտադիտարկումների վերաբերյալ տեղեկանքներ, որոնցում ներկայացված են ռուսաստանյան հեռուստածրագրերի տեսալսողական նյութերում Հայաստանի մասին ապատեղեկատվություն պարունակող բովանդակության օրինակներ: Ռուսաստանի գործընկերներն ի գիտություն են ընդունել ՀՀ կարգավորող մարմնի ղեկավարի տեսակետն ու մտահոգությունը եւ խոստացել միջոցներ ձեռնարկել նմանաբովանդակ տեղեկատվության նվազեցման ուղղությամբ:

2022 թ. մարտին Հանձնաժողովի նախագահն ընդունել է ԵԱՀԿ մամուլի ազատության հարցերով ներկայացուցիչ Թերեզա Ռիբեյրոյի գլխավորած պատվիրակությանը: Տիկին Թերեզա Ռիբեյրոն, գոհունակություն հայտնելով ընդունելության եւ ոլորտում առկա հիմնախնդիրները ներկայացնելու համար, կարեւորել է խոսքի եւ մամուլի ազատության գործում Հանձնաժողովի կատարած աշխատանքը: Նաեւ նշել է, որ Հանձնաժողովն որպես կարգավորող մարմին՝ իր դերակատարությամբ ապահովում է մեդիադաշտի տարբեր բաղկացուցիչների հավասարակշռությունը:

Հանձնաժողովը մասնակցել է Եվրոպայի Միության 2023-2026 թթ. գործունեության ծրագրի մշակման քննարկումներին եւ կատարված աշխատանքների արդյունքում դարձել ծրագրի շահառու:

2022 թվականին Հանձնաժողովը շարունակել է իր բնականոն հանդիպումները ՀՀ-ում դիվանագիտական առաքելություն իրականացնող պաշտոնյաների հետ, մասնավորապես՝ աշխատանքային հանդիպումներ են կայացել Հայաստանում Մեծ Բրիտանիայի, Նիդերլանդների, Ռուսաստանի Դաշնության դեսպանների հետ:

Կնքված հուշագրերի շրջանակներում 2022 թվականի դեկտեմբերին Հանձնաժողովը նախապատրաստական աշխատանքներ է սկսել Վրաստանի, Լիտվայի եւ Չեխիայի մեդիա ոլորտը կարգավորող մարմինների պատվիրակությունների այցերն Երեւան կազմակերպելու նպատակով:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ



















2022 թվականի դեկտեմբերից սկսվել են նաեւ աշխատանքներ իրականացվել Հարավային Ամերիկայի գործընկերների հետ համագործակցելու նպատակով: Առաջինն Արգենտինայի Հանրապետությունն է, որի Հաղորդակցությունների պետական մարմնի (ENACOM) հետ նախատեսվում է ստորագրել Փոխըմբռնման հուշագիր:

## 17 ԸՆԴՈՒՆՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

2022 թվականին հանձնաժողովը ընդունել է 149 որոշում՝ 148 անհատական եւ 1 նորմատիվ:

***Գծապատկեր 22.*** *2019-2022 թվականներին Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների համեմատական պատկերը*




Օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով Հանձնաժողովն իրավունք ունի ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր, համաձայն որի հաշվետու տարում կարգավորող պետական մարմինը սահմանել է հետեւյալ իրավական ակտերը՝

- Հանձնաժողովի՝ 2022 թվականի դեկտեմբերի 13-ի «2020 թվականի օգոստոսի 28-ի «Լսողական խնդիրներ ունեցող սպառողների համար օրվա ընթացքում համապատասխանաբար առնվազն մեկական մանկական եւ լրատվական տեսալսողական հաղորդումներ ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն ենթագրով հեռարձակման եթերային ժամերը սահմանելու մասին» թիվ 82-Ա որոշման մեջ փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» թիվ 149-Ա որոշում:

- Հանձնաժողովի՝ 2022 թվականի մարտի 16-ի «Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ 94-Ն որոշման մեջ փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» թիվ 33-Ն որոշում:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ 18

Հաշվետու տարում Հանձնաժողով մուտքագրվել է 912 գրություն, քաղաքացիներից եւ կազմակերպություններից ստացվել է 60 հարցում, դիմում-բողոք (հեղինակային իրավունքի խախտումների, տեսալսողական մեդիածառայությունների բնագավառը կարգավորող իրավական ակտերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու, տեսալսողական ծրագրերի վերահաղորդումները դադարեցնելու, վարչական վարույթ հարուցելու մասին եւ այլն), որոնց պատասխան է տրվել համաձայն գործող օրենսդրական ակտերի: 2022 թվականին Հանձնաժողովից ելքագրվել է 919 գրություն:

**Գծապատկեր 23.** *2019-2022 թվականներին Հանձնաժողով մուտքագրված գրությունների (դիմում-բողոքների) համեմատական պատկերը*




## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԵՐԱԶԻՆՈՒՄ 19

2022 թվականին Հանձնաժողովը հիմնականում ավարտեց 2020 թվականին մեկնարկած տեխնիկական վերազինման աշխատանքները: Հանձնաժողովի աշխատանքների արդյունավետությունը եւ որակը բարձրացնելու նպատակով ձեռք է բերվել Formicaitek մշտադիտարկման համակարգը՝ հնարավորություն տալով Հեռուստառադիոհեռարձակման ցանցից օպտիկական մանրաթելով ստանալ հանրապետական, մայրաքաղաքային եւ մարզային բոլոր հեռուստաալիքների ազդանշանները ULTRA-HD ձեւաչափով:



Formicaitek համակարգը միաժամանակ թույլ է տալիս արխիվային համակարգում մշտադիտարկվող հեռուստածրագրերի ազդանշանները պահպանել 46 օր անընդմեջ:

Formicaitek-ում ներառված է նաեւ MULTI TUNER համակարգը, որը հնարավորություն է ընձեռել մշտադիտարկելու նաեւ մայրաքաղաքային ծածկույթի բոլոր ռադիոընկերությունների ազդանշանները՝ նույնպես պահպանելով 46 օր անընդմեջ: Նշված համակարգի անարգել աշխատանքի համար ձեռք է բերվել նաեւ APC SMT2200 SMART UPS անխափան սնուցման ժամանակակից սարքը, որը հնարավորություն է տալիս հոսանքազրկման ժամանակ անխոչընդոտ աշխատանքներ իրականացնել 70-75 րոպե շարունակ:

2021-2022 թվականներին ձեռք է բերվել գերհզոր սերվերային համակարգ, իր անխափան սնուցման սարքով, որը հնարավորություն է տալիս իրականացնելու հանրապետական, մայրաքաղաքային, մարզային բոլոր հեռուստաընկերությունների, ինչպես նաեւ ռադիոընկերությունների էլեկտրոնային մատյանների հաշվառման աշխատանքները: Միաժամանակ սերվերային սենյակում տեղադրվեց օդափոխության համակարգ, որը թույլ է տալիս տվյալ տարածքում ապահովելու ջերմաստիճանի եւ խոնավության սահմանված չափանիշները:

Հանձնաժողովը ձեռք է բերել նաեւ սերվերային համակարգ՝ իր անխափան սնուցման սարքով, որն օգտագործվում է հանձնաժողովի ներքին փաստաթղթաշրջանառության, ինչպես նաեւ տեսալսողական ազդանշանների փոխանցման համար:

2022 թվականին Հանձնաժողովում տեղադրվել է եւս մեկ սերվերային համակարգ, իր անխափան սնուցման բարձրակարգ սարքով, որը նախատեսվում է օգտագործել էլեկտրոնային կառավարման «Mulberry» համակարգը սպասարկելու համար:

## ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Հաշվետու տարում ՀՀ Ազգային ժողովի՝ 2022 թվականի հունվարի 21-ի թիվ ԱԺՈ-23-Ա, 2022 թվականի հունվարի 21-ի թիվ ԱԺՈ-24-Ա, 2022 թվականի մայիսի 4-ի թիվ ԱԺՈ-32-Ա որոշումներով Հանձնաժողովի կազմը համալրվել է 3 նոր անդամով՝ Գոհար Մամիկոնյան, Հակոբ Հակոբյան (Հակոբ Մովսես), Արթուր Մանուկյան:

Միաժամանակ, Ազգային ժողովի՝ 2022 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ ԱԺՈ-47-Ա որոշմամբ Տիգրան Հակոբյանը վերընտրվել է Հանձնաժողովի անդամի պաշտոնում, իսկ սեպտեմբերի 16-ին՝ Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի նախագահի պաշտոնում:

2022 թվականին Հանձնաժողովի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար կազմակերպվել եւ անցկացվել է 14 մրցույթ:

Հանձնաժողովի 23 քաղաքացիական ծառայող վերապատրաստվել է՝ մասնակցելով Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից կազմակերպված «Հասարակության հետ կապերի ապահովում», «Բարեվարքություն», «Բանակցությունների վարում», «Ժամանակի կառավարում», «Խնդրի լուծում», «Տեղեկության հավաքագրում եւ վերլուծություն», «Բողոքների բավարարում», «Հաշվետվությունների մշակում», «Մարդկային ռեսուրսների կառավարում», «Իրավական ակտերի մշակման առանձնահատկությունները», «Վարչարարության հիմունքներ եւ վարչական վարույթ» թեմաներով հեռավար եւ առկա դասընթացներին:

2 քաղաքացիական ծառայող վերապատրաստվել է՝ մասնակցելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից կազմակերպված «Ծրագրային բյուջետավորում», իսկ 1 քաղաքացիական ծառայող՝ «Կիբեռանվտանգության հիմունքներ» թեմաներով դասընթացներին:

Հաշվետու տարում Հանձնաժողովի 2 քաղաքացիական ծառայողի նկատմամբ կիրառվել է խրախուսանք, 1 քաղաքացիական ծառայողի նկատմամբ՝ կարգապահական տույժ՝ նախազգուշացում:

Հանձնաժողովի աշխատանքներն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով կատարվել են կառուցվածքային փոփոխություններ, որոնց արդյունքում փոփոխվել են հաստիքացուցակը եւ քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը, հաստատվել է պաշտոնի նոր անձնագիր:

Տեղեկությունների համալրման ուղղությամբ աշխատանքներ են կատարվել նաեւ քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակի՝ Հանձնաժողովի բաժնում:

# 21 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ

Հանձնաժողովի գործունեությունը ֆինանսավորվում է ՀՀ պետական բյուջեից: Հանձնաժողովն՝ որպես բյուջետային գլխավոր կարգադրիչ, 2022 թվականին իրականացրել է մեկ ծրագիր եւ երեք միջոցառում:

**«Տեսալսողական մեդիայի ոլորտի կանոնակարգում»** ծրագրով 2022 թվականի պետական բյուջեով Հանձնաժողովին հատկացվել է 337386.9 հազար ՀՀ դրամ, ճշտված պլանը կազմել է 325397.3 հազար ՀՀ դրամ, որի կատարողականը կազմել է 324165.5 մլն ՀՀ դրամ կամ 99.6%: Շեղումը հիմնականում պայմանավորված է Հանձնաժողովի արտասահմանյան եւ ներհանրապետական գործուղման ծախսերի տնտեսմամբ, ինչպես նաեւ գնումների պլանով նախատեսվածից ավելի ցածր գնով սարքավորումների ձեռք բերմամբ:

